

**Հողային Բարեփոխումներ,  
Գյուղական Աղքատություն  
և Անհավասարություն.**

Հողային Քաղաքականության  
Աղքատամետ Մոտեցումներ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ  
ՄԱԶԾ Հայաստան

Մաքս Սպուր

Սոցիալական Հետազոտությունների Ինստիտուտի  
թղթակից պրոֆեսոր, Անցումային շրջանի և զարգացման  
ուսումնասիրության կենտրոն (CESTRAD), Հաագա, Նիդերլանդներ  
Է-փոստ՝ spoor@iss.nl

Դեկտեմբեր 2004  
Հաագա-Երևան



## Բովանդակություն

|   |    |
|---|----|
| Երախտիքի Խոսք   | 4  |
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ   | 5  |
| 2. ՎԵՐԱԲԱՇԽՈՂԱԿԱՆ ԵՎ ԷԳԱԼԻՏԱՐ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ                     | 9  |
| Հողային բարեփոխումների արդյունքները                                     | 9  |
| Հողը որպես աղքատության մեղմացման գործոն                                 | 13 |
| 3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ                      | 13 |
| Չբաղվածություն և արտադրողականություն                                    | 14 |
| Համախառն գյուղատնտեսական արտադրանք                                      | 15 |
| Ներքին առևտրի պայմանների վատթարացումը                                   | 17 |
| Արտադրության մասնագիտացումը և գյուղացիական տնտեսությունների մեծությունը | 18 |
| 4. ՀՈՂԻ ԱՌՔՈՒԿԱՃԱՌՔԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ            | 20 |
| Հողերի համակենտրոնացումը  | 22 |
| 5. ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՓՈԽ. ՀՈՂԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ        | 26 |
| 6. ՇՈՒԿԱՆԵՐ. «ՀՈՂԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ»   | 28 |
| Ոռոգումը որպես գյուղատնտեսական զարգացման «առանցք»                       | 29 |
| Ֆինանսական շուկաները և վարկային միջոցների մատչելիությունը               | 30 |
| Արտադրության միջոցները և տեխնոլոգիաները                                 | 31 |
| Գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկաները                            | 32 |
| 7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՂՔԱՏԱՄԵՏ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ          | 32 |
| Հավելված I: Հայաստանի 20 համայնքներում հողերի կառուցվածքը               | 38 |
| Օգտագործված նյութերի ցանկը  | 39 |

## **Երախտիքի Խոսք**

Այս վերլուծությունը պատրաստվել է տեղական խորհրդատուների՝ Գագիկ Գաբրիելյանի (գյուղատնտեսության տնտեսագետ) և Վահագն Գրիգորյանի (անշարժ գույքի մասնագետ) աջակցությամբ: ՄԱՉԾ-ի տնտեսագետ Աղասի Սկրտչյանն աջակցություն է ցուցաբերել հետազոտության նախապատրաստման աշխատանքներին և Հայաստանի Կառավարության անդամների հետ հանդիպումների կազմակերպմանը: Հետազոտությունը շահել է ՄԱՉԾ տեղական (Աստղիկ Միրզախանյան) և միջազգային (Թերի ՄաքՔինլի, Չարգացման հայեցակարգերի վարչություն, ՄԱՉԾ Նյու Յորք) խորհրդատուների դիտողություններից: Վերջապես, 2004 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ին Հայաստան կատարած առաքելության ընթացքում թիմն օգտվել է ՄԱՉԾ Մշտական ներկայացուցիչ և ՄԱԿ-ի մշտական համակարգող Լիզ Գրանդեի և իր գրասենյակի աշխատակազմի աջակցությունից: Թիմը արժանացել է լավ ընդունելության զանազան պետական գործակալություններ, մասնավորապես Կադաստրի պետական կոմիտե և Գյուղատնտեսության նախարարություն այցելելիս: Այսուհանդերձ, փաստաթղթում արտահայտված կարծիքներն ու, բնականաբար, սխալները բացառապես հեղինակին են:

**ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀՈՂԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ  
ԱՂՔԱՏԱՄԵՏ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն վերլուծությունը նպատակ ունի խթանել գյուղատնտեսական հողերի մասնատվածության, միավորման և համակենտրոնացման վերաբերյալ հանրային քննարկումները, որը կնպաստի այնպիսի աղքատամետ հայեցակարգի ձևավորմանը, որի առաջնային նպատակը կլինի առավել փոքր գյուղացիական տնտեսությունների վիճակի բարելավումը: Հողին վերաբերող հայեցակարգի ձևավորումը չափազանց կարևոր է Հայաստանի համար, քանզի երկիրը թևակոխել է հողային բարեփոխումների մի նոր փուլ, որի ներքո նախատեսվում է պետական սեփականություն հանդիսացող հողի մեծ մասը հանձնել համայնքների իրավասությանը և ավարտել սեփականաշնորհված հողերի պետական գրանցումը:

Վերլուծելով Հայաստանի գյուղատնտեսությունը, որը բնութագրվում է 1990-ների սկզբին իրականացված հողի վերաբաշխողական սեփականաշնորհման արդյունքում առաջացած փոքր մասնավոր հողակտորների գերիշխող թվաքանակով, հետազոտությունը կանդորդառև հողի, աղքատության և անհավասարության վերաբերյալ մի շարք հայեցակարգային տարբերակների քննարկմանը, ներկայացնելով դրանց հնարավոր հետևանքները: Քննարկման ենթակա կարևոր խնդիրներն են հողի, փոխառու միջոցների, արտադրանքի, արտադրության միջոցների շուկաների և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի փոխկապակցված դերերը, ինչպես նաև այս շուկաներում իրավական, ֆիսկալ, ներդրումային և դոտացիոն գործիքների միջոցով զանազան միջամտությունների նպատակահարմարությունը: Այս խնդիրները կքննարկվեն առանցքային մի հարցի համատեքստում, այն է. ի՞նչ քայլերի կարող է դիմել պետությունը գյուղատնտեսական արտադրության ապրանքայնությունը բարձրացնելու համար, միաժամանակ չխորացնելով գյուղական վայրերում արդեն իսկ առկա բարձր գործազրկությունը և չվտանգելով սոցիալական ապահովության գործոն հանդիսացող հողի նշանակությունը: Արդյո՞ք ամեն ինչ, բացի հանրային ծառայություններից և նպաստավոր ինստիտուցիոնալ կառուցվածից, պետք է կարգավորվի շուկայի կողմից, թե՞ անհրաժեշտ է առաջ անցնել նվազագույն միջամտության դերից, սահմանելով շուկայի զարգացման ուղիները և պաշտպանելով այդ շուկայում առավել անպաշտպան դիրքերում գտնվողների շահերը: Հայաստանի գյուղական վայրերում այս վերջինները փոքր հողակտորներ ունեցողներն են, կամ հողագուրկները: Հետևաբար, թեպետ Հայաստանի գյուղատնտեսության հաջողություններն ու ձախողումները պայմանավորվում են մի շարք կարևոր գործոններով, հողն ու դրա մատչելիությունն այդ գործոններից առավել կարևորներն են:

Սույն վերլուծությունն ունի հետևյալ կառուցվածքը: Երկրորդ մասը համառոտ կերպով ամփոփում է Հայաստանում հողային բարեփոխումների ընթացքը: Շեշտադրվում է այդ բարեփոխումների սկզբնական արդյունքը՝ Էգալիտար ագրարային կառուցվածքը: Հաջորդ

մասը ներկայացնում է ագրարային կառուցվածքի վերլուծություն ըստ մարզերի՝ համադրելով անհավասար մեկնարկային պայմանները (բնակչության խտությունը, հողի սակավությունը, ոռոգման համակարգի և հողի որակը) այնպիսի գործոնների հետ, որպիսիք են գյուղական վայրերից աշխատուժի արտահոսքի ավելացումը և աճող կարևորություն ստացող հողի վարձակալության և իրացման շուկաների ձևավորումը: Գյուղական աղքատությունը դիտարկվում է հողի և դրա մատչելիության տեսակետից, քանի որ հողային բարեփոխումները վերջին հաշվով մեղմեցին խորը տնտեսական ճգնաժամի հետևանքները, երբ հողն ապահովեց տնային տնտեսությունների պարենային ինքնաբավարարումը և մասնակի զբաղվածությունը, իսկ գյուղատնտեսությունը կլանեց այլ ոլորտներում գոյացած աշխատուժի ավելցուկը: Սրա հետ մեկտեղ 1996 թվականից ի վեր գյուղական աղքատության մակարդակը մնում է անփոփոխ, մինչդեռ քաղաքային աղքատությունն արագ տեմպերով նվազում է:

Երրորդ մասը մանրամասն վերլուծում է գյուղատնտեսական ոլորտի կատարողականը, կրկին հնարավորության սահմաններում ըստ մարզերի, հիմնվելով մարզային տվյալների վրա: Նման տարբերակված վերլուծությունը փորձում է պատասխանել այն հարցին, թե որո՞նք են գյուղատնտեսության դանդաղ զարգացման պատճառները: Այս մասը շեշտադրում է Հայաստանի գյուղատնտեսության արտադրանքի կառուցվածքի փոփոխությունը, մասնավորապես անդրադառնալով 1990-ականների սկզբի հողի սեփականաշնորհումից առաջացած փոքր տնտեսությունների կողմից որդեգրած ռիսկից խուսափելու վարքագիծը: Այս մասը նաև համախառն գյուղատնտեսական արտադրանքի վերլուծության միջոցով ցույց է տալիս, որ ծավալային առումով գյուղատնտեսության ոլորտի կատարողականը գերազանցել է աճի ցուցանիշները, և առաջ է քաշում մի վարկած, որի համաձայն այս երևույթը Ռուսաստանի ճգնաժամի հետևանքով առաջացած գնային «մկրատի», այսինքն պարենամթերքի հարաբերական գների անկման հետևանք էր: Զննարկվում է նաև այն հարցը, թե ինչու՞ եկամուտները չեն ավելանում, չնայած 2000 թվականից ի վեր ներքին առևտրի պայմանների (այսուհետ՝ ToT<sub>D</sub>) որոշակի բարելավմանը: Այնուհետև, չնայած վերջնական գնահատականների համար անհրաժեշտ մանրամասն տվյալների բացակայությանը խոսվում է այն մասին, որ նկատվում է հացահատիկ և կարտոֆիլ արտադրող մարզերում (Արագածոտն, Շիրակ և Գեղարքունիք, Լոռի), նկատվում է ագրարային կառուցվածքի փոփոխության, մասնավորապես համեմատաբար խոշոր տնտեսությունների առաջացման անհրաժեշտություն, մինչդեռ մրգերի (Արարատ, Արմավիր, Կոտայք), բանջարեղենի ու բանջարաբուստանային մշակաբույսերի (Արարատ և Արմավիր) արտադրության մեջ մասնագիտացած մարզերում նման դինամիկա չի նկատվում և փոքր տնտեսությունների դերը առաջիկայում էլ պահպանվելու է:

Չորրորդ մասն ամբողջությամբ նվիրված է հողի հետ կապված գործարքների՝ վարձակալության և առքուվաճառքի, շուկային: Այս մասում քննարկվում են հողի հետ կապված գործարքների դրդապատճառները և դրանց վրա ազդող գործոնները: Ցավոք այս պահին դեռևս հնարավոր չէ լիարժեքորեն պատասխանել այն հարցին, թե ո՞վ է գնում կամ վարձակալության վերցնում հողը, ու՞մից և ի՞նչ նպատակներով: Սակայն Կադաստրի պետական կոմիտեի հավաքական տվյալներից ակիայտ է դառնում, որ 2002 թվականից նկատվում է հողի հետ կապված գործարքների թվի աճ: Կարելի է ենթադրել, որ աղքատությունն ու չքավորությունը, ինչպես նաև երկրից հեռանալու մտադրությունները հողի

վաճառքի հիմնական դրդապատճառները կարող են հանդիսանալ և Հայաստանի դեպքում հողի վաճառքը ճակատագրական վերջին քայլ է համարվում: Ինչ վերաբերում է հողի առքի դրդապատճառներին, ապա դրանք հավանաբար պայմանավորված են փոքր հողատարածքները մեծացնելու ցանկությամբ, ֆինանսական խմբերի կողմից ներդրումային նպատակներով և վերավաճառքի ակնկալիքով, կամ էլ ուղղահայաց ինտեգրում հետապնդող, հիմնականում գինեգործությամբ ու մրգերի պահածոների արտադրությամբ զբաղվող ագրոտնտեսությունների գործունեության հետ: Այս մասում ներկայացված է նաև մարզերի մակարդակով հողի ներկա բաշխվածությունը և առքուվաճառքի գործարքների մանրամասների վերաբերյալ կադաստրային տվյալների վերլուծությունները, որոնք վկայում են, որ սկսվել են հողերի համակենտրոնացման առաջին քայլերը<sup>1</sup>: Հողերի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս մեծ քանակությամբ չափազանց մանր գյուղացիական տնտեսությունների առկայություն, ընդ որում յուրաքանչյուրի հողատարածքը բաղկացած է միջին հաշվով 3 փոքր հողակտորներից: Այս մասում առաջ է քաշվում այն միտքը, որ նույն գյուղացիական տնտեսություններին պատկանող առանձնացված մանր հողակտորների միավորումը շատ ավելի նախընտրելի տարբերակ է քան հողերի խոշորացման միջոցով համակենտրոնացումը: Դժբախտաբար, մեկ տնտեսությանն պատկանող հողակտորների միավորմանը առ այժմ խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների վստահության պակասը միմյանց և իրավասու կառույցների նկատմամբ:

Հետազոտության հիմնգերորդ մասը վերլուծում է հողային բարեփոխումների ներկայիս նոր փուլը, որը անցնում է բավական աննկատ: Բարեփոխումների այս փուլում պետությունը համայնքներին է փոխանցում բավական մեծ հողատարածքներ, հիմնականում խոտհարքներ, արոտավայրեր և մարգագետիններ, իրեն թողնելով միայն համայնքների պաշտոնական սահմաններից դուրս գտնվող հողերը<sup>2</sup>: Այս քայլը համայնքներին հնարավորություն է տալիս ինքնուրույն տնօրինել այդ հողերը բաշխելու կամ բաց աճուրդով վարձակալության հանձնելու հարցերը: Գյուղական համայնքների մոտ մեկ երրորդն արդեն ստանձնել են պետական պահուստային հողերի այս մասի հսկողությունը, որի արդյունքում արդեն կայացել են համայնքների կողմից մասնավոր հատվածին այս «նոր» հողերի օտարման առաջին գործարքները: Համաձայն որոշ տեղեկությունների, այս գործարքների մի մասը բավականաչափ թափանցիկ չեն եղել, և միտում է եղել հողերը օտարել Հայաստանի համար ոչ սովորական մեծ հողակտորներով<sup>3</sup>: Այս մասում ներկայացվում է մեր այն տեսակետը, որ այս գործընթացի միջոցով գյուղական համայնքներին տրվել է բավական հզոր լծակ, որը կարելի է օգտագործել աղքատ և խոցելի գյուղացիական տնտեսությունների վիճակը բարելավելու համար: Այս ենթատեքստում է քննարկվում նաև համայնքային արոտավայրերի հարցը, որը նույնպես մեծ ուշադրության կարիք ունի: Հետազոտությունում առաջ է քաշվում այն տեսակետը, որ արոտավայրերի, որպես հանրային սեփականության մատչելիությունը

<sup>1</sup> Չնայած, որ հողերի միայն փոքր հատվածն է եղել վաճառքի ենթակա, և հողի համակենտրոնացման մեծ մասը տեղի է ունենում գրանցված և չգրանցված վարձակալության միջոցով:

<sup>2</sup> Այս հարցն օրակարգի մեջ էր դեռ 1990-ականների վերջերին, սակայն հստակեցվել է միայն վերջերս (տե՛ս Լեյբմանին և Միրզախանյանին առաջին հղումը, 2001:8):

<sup>3</sup> Համաձայն Կադաստրի տվյալների գրանցվել են համայնքների կողմից պետական հողերի վաճառքի այնպիսի դեպքեր, երբ վաճառված հողակտորները եղել են 100-ից 300 հեկտար: Կառավարությունը այդ փաստերին արձագանքել է հողի նման օտարման նկատմամբ խիստ սահմանափակումներ մտցնելով (հարցազրույց, 7 հոկտեմբերի 2004 թվական, Երևան):

պետք է կարգավորվի համատեղ սեփականության իրավունքով և անհատ գյուղացիներին վարձակալությամբ տալու սկզբունքով, քանզի արոտավայրերի դեպքում օտարումը, որպես կանոն, ոչ՝ արդյունավետ է և ո՛չ էլ արդար:

Հետազոտության վեցերորդ մասում փորձ կկատարվի ընդլայնել վերլուծության շրջանակները հողի, գյուղական աղքատության և անհավասարության շրջանակներից դուրս և անդրադառնալ Հայաստանի շուկայական և ինստիտուցիոնալ կառուցվածքի միջավայրին, որի պայմաններում գործում են մանր գյուղացիական տնտեսությունները: Այս միջավայրը, որը էականում կարելի է որակավորել, որպես շուկաների «բացակայություն», բնութագրվում է երեք հիմնական հատկանիշներով, այն է՝ անարդյունավետությամբ, տարանջատվածությամբ, և բարձր գորշարքային ծախսերով: Բացառությամբ անկախությանը հետևած խոշորածավալ հողային բարեփոխման, գյուղատնտեսության և գյուղի զարգացման հայեցակարգերը եղել են խիստ սահմանափակ, որը տեղավորվում է Հայաստանի քաղաքական տնտեսության այսպես կոչված «քաղաքամետ» բնույթը: Այս կապակցությամբ, կոոպերատիվների կամ հողային ասոցիացիաների և վարկավորման հնարավորությունների բացակայության պայմաններում գյուղի արտադրողներն ապրանքային շղթաներում հաճախ անբարենպաստ պայմաններում են հայտնվում: Բացի այդ, տնային տնտեսությունների ուսումնասիրությունների համաձայն, գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման և հողային սակավ միջոցների լիարժեք և արդյունավետ օգտագործման տեսակետից կարևոր են ոչ միայն հողի մատչելիությունը, այլ նաև վարկավորման և ֆինանսական այլ ծառայությունների մատչելիությունը, հողի որակն ու ոռոգման առկայությունը:

Եզրափակիչ յոթերորդ մասում քննարկվում է այն հարցը, թե որո՞նք են պետության անելիքներն աղքատամետ հողային (և ընդհանուր առմամբ գյուղական վայրերի զարգացման) հայեցակարգերի ձևավորման առումով: Այստեղ ներկայացվում են մի շարք հնարավոր միջամտությունների տարբերակներ ուղղված մի կողմից ապրանքայնությունն ու արդյունավետությունը բարձրացնելու (այդ թվում նաև հողակտորների միավորման միջոցով), և մյուս կողմից հողի, որպես աղքատության նվազեցման հզոր միջոցի, մատչելիությունը պահպանելու ուղղությամբ: Այս կապակցությամբ քննարկվում են մի շարք ինստիտուցիոնալ խնդիրներ և ներկայացվում են որոշ առաջարկներ հողային հայեցակարգերի և ինստիտուցիոնալ բարեփոխումների ուղղությամբ, այդ թվում՝ համայնքների կողմից իրենց փոխանցված պետական պահուստային հողերի կարգավորվող և թափանցիկ օգտագործման ձևեր (ուղղակի հատկացումներ աղքատ և խոցելի գյուղացիական տնտեսություններին, համայնքային հողերի, օրինակ՝ արոտավայրերի վարձակալություն, վաճառք և պատշաճ կառավարում), արտադրության կամ իրացման համար կոոպերատիվների կամ միությունների ստեղծման խթանում, սեփականության իրավունքի գրանցման գործընթացի ամբողջականացում, հողի շուկաների և գործընթացը կառավարելու ինստիտուցիոնալ կարողությունների հետագա զարգացում, ինստիտուցիոնալ համագործակցության ամրապնդում վերլուծությունների կատարման, հայեցակարգերի մշակման և իրականացման ներկայումս կառավարման բոլոր մակարդակներում անբավարար կարողությունների բարելավում: Ըստ կարևորության աստիճանի առաջարկվում են նաև այլ ենթաճյուղային հայեցակարգեր, մասնավորապես՝ գյուղական վայրերի ենթակառուցվածքների, հատկապես ճանապարհներ-

րի, ոռոգման և հաղորդակցման համակարգերի վերականգնման համար հանրային ներդրումային ծրագրեր տեղի գործազուրկների հնարավոր մասնակցությամբ (օրինակ՝ սնունդ աշխատանքի դիմաց), վարկային քաղաքականություն, շրջանների զարգացում և ֆիսկալ ապակենտրոնացում հանրային կառավարման համակարգում համայնքների աճող դերի ներքո, գյուղատնտեսական գործունեությունից չափազանց կախված գյուղաբնակների եկամուտները ավելացնելու նպատակով ոչ-գյուղատնտեսական տնտեսությունների զարգացում, մարդկային կապիտալի ձևավորում կրթական համակարգի ֆինանսավորումը դեպի փոքր քաղաքներն ու գյուղական վայրերն ուղղելու միջոցով, մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների ստեղծում գյուղական և գյուղա-քաղաքային վայրերում, ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ ոչ-գյուղատնտեսական մասնագիտությունների ուղղությամբ: Այս բաժնում քննարկվում են նաև Հայաստանի ագրարային կառուցվածքի վերաբերյալ մեր ներկա իմացության հիման վրա մշակված մի շարք սցենարներ:

## **2. ՎԵՐԱԲԱՇԽՈՂԱԿԱՆ ԵՎ ԷԳԱԼԻՏԱՐ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ**

Վերաբաշխողական հողային բարեփոխումներ իրականացվել են նախկին Խորհրդային Միության միայն մի քանի փոքր հանրապետություններում, ընդ որում գործընթացը սկսվեց Հայաստանում, Վրաստանում և մասամբ Ղրղզստանում, որոնց հետագայում միացավ նաև Մոլդովան: Գործնականում Հայաստանի հողային բարեփոխումների ինստիտուցիոնալ հիմքերը դրվեցին մինչև Խորհրդային միության փլուզումը, 1991 թվականի փետրվարին «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» և «Հողի մասին» օրենքների ընդունումով: Անկախացումից անմիջապես հետո ընդունվեցին հողի սեփականաշնորհման համար անհրաժեշտ օրենքները, և վարելահողերի 70 տոկոսն անցավ անհատ գյուղացիական տնտեսություններին<sup>4</sup>:

### ***Հողային բարեփոխումների արդյունքները***

Բարեփոխումների առաջին արդյունքներից էին նոր ստեղծված ընտանեկան գյուղացիական տնտեսությունների չափազանց փոքր չափերը, որոնք միջին հաշվով չէին գերազանցում 1.3-1.4 հեկտար (տե՛ս Աղյուսակ 1), որը մեկ շնչի հաշվով կազմում է 0.5 հեկտարից քիչ: Այս փուլում հիմնականում սեփականաշնորհվեց վարելահողը ինչպես նաև մրգատու և խաղողի այգիների մեծ մասը, մինչդեռ խոտհարքների և արոտավայրերի մեծ մասը մնաց պետության ձեռքերում: Արդյունքում, 1990-ականների կեսերին սեփականաշնորհվեց Հայաստանի գյուղատնտեսական հողերի մեկ երրորդը<sup>5</sup>: Տարբերակված տվյալների բացակայությամբ դժվար է վերականգնել հողերի կառուցվածքի ամբողջական պատկերը հողային բարեփոխումների մեկնարկից անմիջապես հետո: Սակայն այդ կառուցվածքը, կարծես, արմատապես չի փոփոխվել հետ-անցումային ժամանակահատվածում, որը մեզ հնարավորություն է տալիս

<sup>4</sup> Լեյման, Չվի և Աստղիկ Միրզախանյան (2001: 6-7).

<sup>5</sup> Խորհրդային շրջանում արտերն ու արոտավայրերը հիմնականում տնօրինվել են պետական տնտեսությունների կողմից, անհատական տնտեսություններին տրված փաստացի (ոչ պաշտոնական) օգտագործման իրավունքով: Ղրղզստանի և Մոնղոլիայի համեմատությամբ Հայաստանի կառավարությունը նույնպես որոշեց պահպանել նման մատչելիության պայմանները (համակցելով դրանք անհատ արտադրողների վարձակալությանը տալով) և չսեփականաշնորհեց այս հողերի մեծ մասը:

օգտագործել 1997 թվականի առաջին Յոդային հաշվեկշռի տվյալները մեր վերլուծությունների համար: Յոդերի վերաբաշխման արդյունքում ստեղծվել են մոտ 300 հազար գյուղացիական տնտեսություններ և այս թիվը մնացել է համեմատաբար կայուն բերջին տարիների ընթացքում:

Աղյուսակ 1: Գյուղացիական տնտեսությունների թիվն ու մեծությունը (1998-2003)

|  | 1992  | 1993                  | 1996        | 1998               | 2000         | 2002      | 2003        |
|--|-------|-----------------------|-------------|--------------------|--------------|-----------|-------------|
| Գյուղացիական տնտեսությունների թիվը (հազար)       | 165.2 | 238.3                 | 316.4       | 333.8              | 332.6        | 334.7     | 337.9       |
| Գյուղացիական տնտեսությունների տարածքը (հազար հա) | 214.9 | 310.4                 | 429.2       | 447.0              | 460.1        | 453.1*    | 461.3       |
| Միջին մեծության տնտեսությունները (հա)            | 1.30  | 1.30                  | 1.36        | 1.34               | 1.38         | 1.35      | 1.37        |
|  |       | Գյուղատնտեսական հողեր | Վարելահողեր | Բազմամյա տնկարկներ | Անմշակ հողեր | Խոտհարքեր | Արոտավայրեր |
| Յոդային հաշվեկշռ (1997) (հազար հա)               |       | 1,391.4               | 494.3       | 63.8               | 0.4          | 138.9     | 694.0       |

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ (2003a; 2004d); ՌՕՁԵՐԻ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒԼՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (2002) Առաջին հատվածի ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒԼՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (2003a) հատկացրել է մեկ այլ թիվ՝ 471.9, ենթադրելով տարածքի ավելացում

Բացի այդ, սեփականաշնորհված հողատարածքները չափազանց մասնատված էին, քանի որ շահառուներից յուրաքանչյուրը ստացավ վարելահողի մի քանի հողակտորներ (որոնց մեջ, իրենց հերթին, կային ինչպես ոռոգվող, այնպես էլ անջրդի հողակտորներ), մրգատու և խաղողի այգիներ և խոտհարքեր:

Մինչդեռ հողի մատչելիությունը սկզբունքորեն էգալիտար, կամ հավասար, բնույթ էր կրում, ընտանիքի անդամների թվով հողի հատկացումը կախված էր հողային տարածքների ամկայությունից և շահառու բնակչության տվյալ պահի խտությունից: Հետևաբար, մարզերի միջև առաջացան տարբերություններ: Այս տարբերությունները հստակ երևում են 1997 թվականի Յոդային հաշվեկշռի տվյալներից, ինչպես նաև 2000 թվականի տվյալներից:

Ըստ վերջինիս տվյալների (տե՛ս Աղյուսակ 2), գյուղացիական տնտեսության չափերը Արարատի (0.64 հա) և Արմավիրի (0.91 հա) մարզերում զգալիորեն փոքր են Շիրակի (2.45 հա) և Սյունիքի (3.02 հա) տնտեսությունների չափերից<sup>6</sup>: Թեպետ այս համեմատության մեջ բացակայում են մի շարք կարևոր ցուցանիշներ, այն է՝ բարձրությունը, ջրի և ոռոգման ամկայությունը և հողի որակը, և դրա արդյունքում այն ցույց է տալիս միայն չափերի առումով երկրի տարբեր շրջաններում գյուղացիական տնտեսություններին հատկացված հողակտորների անհավասարությունը դեպի: Նույն եզրահանգումների է բերում վերջին տնային տնտեսությունների ուսումնասիրություններից մեկը (Աղյուսակ 3), որը ցույց է տալիս տնտեսությունների միջին չափերի տարբերությունները ըստ մարզերի, որոնք մոտ են ՀՀ ԱՎԾ կողմից տրամադրված 2000 թվականի տվյալներին:

<sup>6</sup> «Մասնավոր հողը» բացառում է այլ անհատներից կամ համայնքից վարձակալված հողը:

Աղյուսակ 2: Հողի գույքացուցակը (մասնավոր և պետական) 2000 թվականի դրությամբ

|                                      | Տնտեսությ<br>ունների<br>թիվը* | Ընդամենը<br>մասնավոր<br>հողեր | Մասնավոր<br>հողակտոր<br>ի սիջն<br>ծավալը | Վարելահող | Մրգատու<br>այգիներ | Խաղողի<br>այգիներ | Խոտհարթ-<br>ներ | Վնաձյալ և<br>այլ հողեր | Ընդամենը<br>պետական<br>հողեր | Վարելահող | Մրգատու<br>այգիներ | Խաղողի<br>այգիներ | Զօգտագոր<br>ծվող հողեր | Արտեր | Արոգավայ-<br>րեր |
|--------------------------------------|-------------------------------|-------------------------------|--|-----------|--------------------|-------------------|-----------------|------------------------|------------------------------|-----------|--------------------|-------------------|------------------------|-------|------------------|
| Արագածոտն                            | 37139                         | 55969                         | 1.51                                     | 41219     | 1875               | 2164              | 1705            | 9006                   | 61549                        | 12051     | 266                | 121               | 426                    | 1233  | 47452            |
| Արարատ                               | 52482                         | 33728                         | 0.64                                     | 18366     | 1886               | 3711              | 874             | 8891                   | 31045                        | 10697     | 289                | 316               | 0                      | 1459  | 18284            |
| Արմավիր                              | 50332                         | 45876                         | 0.91                                     | 27773     | 2813               | 3782              | 30              | 11478                  | 25020                        | 12777     | 795                | 434               | 580                    | 121   | 10313            |
| Գեղարքունիք                          | 46133                         | 74578                         | 1.62                                     | 48769     | 27                 | 0                 | 15655           | 10127                  | 97847                        | 27701     | 89                 | 0                 | 5350                   | 6272  | 58435            |
| Լոռի                                 | 32549                         | 64659                         | 1.99                                     | 33258     | 885                | 74                | 21483           | 8959                   | 87826                        | 9889      | 745                | 3                 | 707                    | 12690 | 63792            |
| Կոտայք                               | 37611                         | 45731                         | 1.22                                     | 27060     | 2428               | 749               | 7734            | 7760                   | 41932                        | 9316      | 788                | 13                | 79                     | 2525  | 29211            |
| Շիրակ                                | 28153                         | 68858                         | 2.45                                     | 57944     | 22                 | 0                 | 2875            | 8017                   | 76014                        | 19110     | 119                | 0                 | 242                    | 7819  | 48724            |
| Սյունիք                              | 12707                         | 38330                         | 3.02                                     | 30231     | 750                | 81                | 3806            | 3462                   | 95302                        | 12237     | 319                | 26                | 1216                   | 3256  | 78248            |
| Վայոց Ձոր                            | 11010                         | 16748                         | 1.52                                     | 10924     | 291                | 472               | 2814            | 2247                   | 40320                        | 4602      | 52                 | 7                 | 2016                   | 2122  | 31521            |
| Տավուշ                               | 24492                         | 29222                         | 1.19                                     | 19470     | 493                | 1258              | 3524            | 4477                   | 39932                        | 7411      | 1006               | 39                | 107                    | 7168  | 24201            |
| Երևան                                | 2478                          | 3443                          | 1.39                                     | 198       | 68                 | 127               | 0               | 3050                   | 2970                         | 1308      | 337                | 389               | 0                      | 37    | 899              |
| Համայնքնի<br>սահմաններում            | 335086                        | 477142                        | 1.59                                     | 315212    | 11538              | 12418             | 60500           | 77474                  | 599757                       | 127099    | 4805               | 1348              | 10723                  | 44702 | 411080           |
| Համայնքնի<br>սահմաններից դուրս       |                               |                               |  |           |                    |                   |                 |                        | 324868                       | 6540      | 44                 | 3                 | 0                      | 30740 | 287541           |
| Ընդամենը<br>գյուղատնտեսական<br>հողեր |                               | 477141                        |  | 315212    | 11538              | 12418             | 60500           | 77474                  | 924625                       | 133639    | 4849               | 1351              | 10723                  | 75442 | 698621           |

Աղբյուրները: ՀՀ ԱՎԾ (2003b), ՀՀ Մարզերը թվերով, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրամադրված տվյալներ

Ծանոթ: \*Ներառում է 335,086 (անհատական) գյուղացիական տնտեսություններ և 10 կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ. 2002 թ.-ից ի վեր վերջին խումբը վերանվանվեց առևտրային կազմակերպությունների: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների, 2003 թ.-ի դրությամբ գրանցված էին 334,789 գյուղացիական տնտեսություններ և 110 առևտրային կազմակերպություններ:

Աղյուսակ 3: Սեփական և վարձակալած հողը մեկ գյուղացիական տնտեսության հաշվով. բաշխում ըստ մարզերի (2003 թվականի տվյալներ, հեկտար)

|                 | Օգտագործվող<br>գյուղատնտեսական<br>հող | Սեփական | Վարձակալած |
|-----------------|---------------------------------------|---------|------------|
| Արագածոտն       | 1.79                                  | 1.73    | 0.07       |
| Արարատ          | 0.57                                  | 0.51    | 0.07       |
| Արմավիր         | 1.16                                  | 1.01    | 0.16       |
| Գեղարքունիք     | 1.77                                  | 1.54    | 0.25       |
| Լոռի            | 2.13                                  | 1.68    | 0.49       |
| Կոտայք          | 1.58                                  | 1.53    | 0.05       |
| Շիրակ           | 2.83                                  | 2.79    | 0.05       |
| Սյունիք         | 2.48                                  | 2.03    | 0.52       |
| Վայոց Ձոր       | 1.34                                  | 1.21    | 0.14       |
| Տավուշ          | 1.18                                  | 1.14    | 0.07       |
| Ընդամենը միջինը | 1.53                                  | 1.37    | 0.16       |

Աղբյուրը: ՀՍՄ # 6 (2004 թվականի նոյեմբեր), 6000 տնային տնտեսությունների ուսումնասիրության հիման վրա:

Ըստ Աղյուսակ 3-ի, անհատական գյուղացիական տնտեսությունները վարձակալում էին միջին հաշվով փոքրածավալ հողակտորներ (0.18 հա) իրենց սեփական համեստ հողատարածքը (1.37 հա) մեծացնելու համար: Այս տվյալները փոքր ինչ ցածր են 1997 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ կատարված գյուղացիական տնտեսությունների ուսումնասիրության արդյունքներից<sup>7</sup>:

Վերադառնալով Աղյուսակ 2-ում ներկայացված մանրամասն տվյալներին նշենք, որ առաջին հողային բարեփոխումներն անդրադարձան Հայաստանի գյուղատնտեսական հողերի համեմատաբար փոքր հատվածին: 2000 թվականի դրությամբ (հաշվի առնելով տեղի ունեցած փոփոխությունների աստիճանական բնույթը, որը հաստատվում է հողի շուկային վերաբերող մասում) սեփականաշնորհված հողերը կազմեցին 477,141 հա<sup>8</sup>, իսկ 924,625 հա-ը դեռ պետական սեփականություն էր (դրանից 599,757 հա-ը գտնվում էին համայնքների սահմաններից ներս, իսկ 324,868 հա-ը՝ դուրս): Վերջին տարբերակումը կարևոր է, քանի որ 2003-2005 թվականներին, համայնքների սահմաններից ներս գտնվող հողը անհատույց հատկացվում է համայնքներին, այն սեփականաշնորհելու, վարձակալելու կամ կառավարելու հանձնելու իրավասությամբ (տե՛ս ստորև): Պետական սեփականություն հանդիսացող հողերի մեծ մասն արոտավայրեր են (75.5 տոկոս), իսկ երկրում առկա վարելահողերը, մրգատու և խաղողի այգիները կազմում են պետական սեփականություն կազմող հողերի 15.1 տոկոսը:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ. 16, որտեղ հեղինակները ներկայացնում են 2.17 հա որպես բոլոր ուսումնասիրված տնտեսությունների միջին չափը, ներառյալ 1.99 հա սեփական և 0.18 հա վարձակալված հողի համար: Թեպետ հողի վարձակալությանը դիմում է բոլոր տնտեսությունների աննշան մասը, իսկ դիմողները հիմնականում վերցնում են միջին հաշվով 1.16 հա: 2001 թվականից ի վեր իրականացված իրավական փոփոխությունները, որ հիմնականում վերաբերում են պահուստային հողերի օտարմանը խոցելի բնակչության (հիմնականում փախստականների և տեղահանվածների) օգտին, և հողի առջուկաճանաչի և վարձակալության ձևավորող շուկան որոշ չափով կարող են բացատրել այս տարբերությունները:

<sup>8</sup> Այդ թվում՝ տնամերձ հողատարածքները, որոնց ընդհանուր ծավալը գնահատվում է մոտ 70,000 հեկտար:

**Յոդր որպես աղքատության մեղմացման գործոն**

1990-ականներին աղքատությունը դարձավ տարածված երևույթ: Յոդային բարեփոխումները Յայաստանում հանդիսացան որպես անցումային առաջին տարիներին երկրի տնտեսության անկման մեղմացնող գործոն, և գյուղական բնակչության համար տնտեսական անկման ազդեցությունը ավելի մեղմ էր քան քաղաքային բնակչության դեպքում: Դա պայմանավորված էր հողի համատարած մատչելիությամբ, ինչպես նաև տնային սպառման համար մթերք արտադրելու կամ բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի իրացման միջոցով դրամական եկամուտն ավելացնելու հնարավորություններով: Սակայն 90-ականների վերջերից իրավիճակը սկսեց կտրուկ փոխվել ի վնաս գյուղական բնակչության: Աղյուսակ 4-ը ներկայացնում է աղքատության ցուցանիշները 1996-2003 թվականների համար: Ինչպես երևում է այս ցուցանիշներից, վերջին տարիների ընթացքում երբ տեղի է ունեցել քաղաքային աղքատության արագ նվազում, իսկ գյուղական աղքատությունը մնացել է գրեթե անփոփոխ: Ավելին, այս եկամտային աղքատության ցուցանիշները հաշվի չեն առնում գյուղական վայրերում սոցիալական և այլ հանրային ծառայությունների շարունակական քայքայումը, որը ենթադրում է մարդկային աղքատության տեսանկյունից գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև էլ ավելի մեծ և խորացող ճեղքվածքի առկայություն: Այս ամենը նշանակում է, որ հող ունենալու կարևորությունը աղքատության նվազեցման գործում տարիների ընթացքում նվազել է, հիմնականում գյուղացիների շուկայական դիրքերի թուլացման հետևանքով: Ստորև կտեսնենք, որ ավելացված արժեքի վերաբաշխման փոփոխության արդյունքում զգալի տուժել են գյուղատնտեսական մթերքների առաջնային արտադրողները որե՛նց եկամուտները մնացել են անփոփոխ կամ նվազել են գյուղատնտեսական արտադրանքի թողարկման աճի պայմաններում: Որպես հետևանք, գյուղական աղքատությունը 1990-ականների կեսերից մնաց անփոփոխ, մինչդեռ քաղաքային արագ նվազեց:

Աղյուսակ 4: Գյուղական և քաղաքային աղքատության համեմատությունը (1996-2003 թվականներ)

|                         | Քաղաքային վայրեր |       |       |       |       | Գյուղական վայրեր |       |       |       |       |
|-------------------------|------------------|-------|-------|-------|-------|------------------|-------|-------|-------|-------|
|                         | 1996             | 1999  | 2001  | 2002  | 2003  | 1996             | 1999  | 2001  | 2002  | 2003  |
| Ընդհանուր բնակչությունը | 100.0            | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0            | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Ոչ աղքատ                | 41.2             | 41.7  | 48.1  | 47.4  | 60.3  | 52.0             | 49.2  | 51.3  | 54.7  | 52.5  |
| Աղքատ                   | 29.2             | 35.1  | 33.6  | 37.6  | 31.8  | 23.6             | 28.2  | 37.4  | 35.1  | 40.7  |
| Շատ աղքատ               | 29.6             | 23.2  | 18.3  | 15.0  | 7.9   | 24.4             | 22.6  | 11.3  | 10.2  | 6.8   |

Աղբյուրը. ԶԶ ԱԿԾ (2003c), Սոցիալական պատկերը և աղքատությունը Յայաստանում

**3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԴԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ**

Յայաստանում գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության և արտադրողականության դինամիկան 1990-ականների «ագրարայնացման» գործընթացում բավական նման է ԱՊՀ պետություններում տեղի ունեցած զարգացումներին: Այնուամենայնիվ անհրաժեշտ է

ավելի մանրամասն ուսումնասիրել Համախառն գյուղատնտեսական արտադրանքը, քանի որ արտադրանքի ֆիզիկական ցուցանիշները, դրամական ցուցանիշների համեմատությամբ ավելի մեծ աճ են ցուցաբերում, որը վկայում է գյուղատնտեսական մթերքների հարաբերական գների վատթարացման մասին: Այս կապակցությամբ, 1997-2003 թվականների առավել արժանահավատ տվյալների հիման վրա արված գնահատումների համաձայն Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում ներքին առևտրի պայմանները (ToT<sub>o</sub>) զգալիորեն վատթարացել են: Բացի այդ, նման աշխարհագրական զանազանությամբ բնութագրվող երկրի մարզերի միջև կան յուրաքանչյուրի մասնագիտացումը պայմանավորող զգալի տարբերություններ: Միևնույն ժամանակ, երկրի երկու հիմնական գյուղատնտեսական մարզերում նկատվում է հացահատիկի արտադրության աճ, հատկապես չափազանց փոքր գյուղացիական տնտեսություններում: Գյուղացիական տնտեսություններն շահույթի ավելացման փոխարեն ընտրում են պարենային ապահովությունը և խուսափում ռիսկերից, թեպետ նման վարքագիծը հիմնականում հատուկ է բարձր արտադրողականությամբ բնութագրվող գյուղատնտեսական արտադրությանը:

### ***Չբաղվածություն և արտադրողականություն***

Շուկայական տնտեսություն անցման ընթացքում գյուղատնտեսության ոլորտի կարևորության զգալի մեծացման հիմնական պատճառներից մեկը այն էր, որ 1990-ականների սկզբին քայքայվեցին տնտեսության և հատկապես արդյունաբերության բոլոր ճյուղերը, բացի գյուղատնտեսությունից: Որպես հետևանք, գյուղատնտեսությունը կլանեց այլ ոլորտներից ազատված աշխատուժի զգալի մասը: Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածությունն աճեց 1991 թվականի հաշվարկային 389,000 աշխատողներից մինչև 1996 թվականի 586,000, և կայունացավ մոտ 565,000 մակարդակում 1990-ականների վերջին (StatKom SNG, 2002: 211): Այս գործընթացն առաջացրեց տնտեսության «ագրայնացում», որը նկատելի է նաև Վրաստանում, Մոլդովայում, Դրոգստանում և Ուզբեկստանում: Ինչպես և ակնկալվում էր, 1990-ականների առաջին կեսին գյուղատնտեսությունում զբաղված աշխատուժի արտադրողականությունը նվազեց, իսկ ավելացված արժեքը մեկ աշխատողի հաշվով 1995 թվականին ընկավ մինչև 1990 թվականի մակարդակի մոտ 70 տոկոսը (ամբողջ տնտեսության դեպքում այդ ցուցանիշը կազմում էր մոտ 60 տոկոս): Անկումը շարունակվեց մինչև 2000 թվական, երբ մեկ աշխատողի հաշվով ավելացված արժեքը գյուղատնտեսությունում կազմում էր 1990 թվականի մակարդակի ընդամենը 50 տոկոսը, այն դեպքում, երբ վերջին տարիներին ամբողջ տնտեսությունում արտադրողականության վերականգնում է նկատվել և 2000-ականների սկզբի դրությամբ աշխատանքի արտադրողականությունը արդեն մոտեցել է նախաանցումային մակարդակին<sup>9</sup>:

---

<sup>9</sup> Griffin *et al*, 2002: 85

### **Համախառն գյուղատնտեսական արտադրանք**

1990-ականների ընթացքում համախառն գյուղատնտեսական արտադրանքը (ՀԳԱ) ավելի քիչ է նվազել քան ՀՆԱ-ը: Օրինակ, 1991-1993 թվականների ընթացքում այն նվազեց ընդամենը 16.3 տոկոսով (տե՛ս Griffin *et al*, 2002: 55): 1998 թվականը բարենպաստ էր գյուղատնտեսության համար, սակայն Ռուսաստանի ճգնաժամի հետևանքով հարաբերական գների փոփոխության արդյունքում այդ տարվա ընթացքում գրանցվեց ՀԳԱ կտրուկ նվազում (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5: Համախառն գյուղատնտեսական արտադրանք (1998-2003)

| Միլիարդ դրամ            | 1998  | 1999  | 2000  | 2001  | 2002  | 2003  |
|-------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Ընդհանուր ՀԳԱ           | 402.1 | 311.7 | 281.2 | 351.0 | 377.6 | 410.1 |
| ՀԳԱ բուսաբուծությունից  | 245.6 | 180.0 | 136.2 | 208.0 | 226.6 | 228.7 |
| ՀԳԱ անասնաբուծությունից | 156.5 | 131.7 | 145.0 | 143.0 | 151.0 | 181.4 |

*Աղբյուրը.* ՀՀ ԱՎԾ (2003a; 2004d);

*Նշում.* ՀՀ ԱՎԾ տարբերակում է գյուղացիական տնտեսությունները (կամ անհատական ձեռնարկությունները) առևտրային կազմակերպություններից: Վերջիններն արտադրում են արտադրանքի չնչին ծավալը:

1998-2000 թվականներին ՀԳԱ-ի նվազումը միայն մասամբ է բացատրվում արատադրության ֆիզիկական ծավալների միտումներով: Համաձայն պաշտոնական վիճակագրության տվյալների, ֆիզիկական ծավալով արտահայտված բերքը այդ ընթացքում նվազել է 12.6 տոկոսով, մինչդեռ ՀԳԱ-ը նվազել է 44.5 տոկոսով: Միևնույն ժամանակ, անասնաբուծության արտադրանքն աճել է 17.4 տոկոսով, մինչդեռ համապատասխան ՀԳԱ-ը նվազել է 8.3 տոկոսով<sup>10</sup>: Ակնհայտորեն տեղի է ունեցել առաջնային գյուղատնտեսական արտադրանքի իրական գների նվազում, իսկ եկամուտը վերաբաշխվել է արժեքային շղթայի այլ օղակների, օրինակ՝ պարենային և գյուղմթերքի վերամշակման ոլորտների օգտին: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսական արտադրանքի ծավալը նշված ժամանակահատվածում մնաց բավարար մակարդակի վրա և չնայած տնտեսական խորը ճգնաժամի, գերազանցեց ակնկալիքները (տե՛ս Աղյուսակ 6 և Աղյուսակ 7):

Այս տվյալների կարևորությունը կայանում է նրանում, որ ցածր արժեքով և մեծ ծավալով բերքի արտադրանքը (ինչպես, օրինակ, հացահատիկը և կարտոֆիլը) աճի միտում է ցուցաբերել թե՛ 1990-ականների և թե՛ հատկապես 2000-ականների ընթացքում: Այս միտումը վկայում է բազմաթիվ փոքր գյուղացիական տնտեսությունների կողմից որդեգրած պարենային ինքնաբավարարման ռազմավարության մասին: Բարձր արժեքով և փոքր ծավալով բերքի արտադրանքի դեպքում նկատվում է առավել բացասական միտում: Հացահատիկի դեպքում արտադրանքի ավելացումը հիմնականում բացատրվում է ցանքատարածության ավելացումով, որը 1991 թվականի 152.500 հա-ից 2003 թվականին հասավ 200,800 հա-ի (ԱՎԾ, 2001, 2002a, 2004d).

<sup>10</sup> Տե՛ս ԱՊՀ Վիճկոմ (2002), և Աղյուսակ 5:

Աղյուսակ 6: Գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները (1991-2003)

| Արտադրանք                             | 1991  | 1995  | 1998  | 1999  | 2000  | 2001  | 2002  | 2003  |
|---------------------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| Հացահատիկ                             | 304.0 | 262.7 | 325.6 | 301.0 | 224.8 | 367.3 | 415.5 | 310.0 |
| Բերքատվություն (տ/հա)                 | (2.0) | (1.5) | (1.6) | (1.7) | (1.2) | (1.8) | (2.2) | (1.5) |
| Կարոֆիլ (հազար տոննա)                 | 275.2 | 427.7 | 440.0 | 414.1 | 290.3 | 363.8 | 374.3 | 507.5 |
| Բանջարեղեն (հազար տոննա)              | 443.5 | 450.9 | 395.2 | 449.0 | 375.7 | 456.0 | 466.0 | 569.4 |
| Բոստանային (հազար տոննա)              | 35.5  | 54.0  | 60.6  | 88.5  | 52.8  | 54.8  | 89.7  | 115.4 |
| Պտուղներ և հատապտուղներ (հազար տոննա) | 166.7 | 146.1 | 126.7 | 88.1  | 128.5 | 102.4 | 82.6  | 103.1 |
| Խաղող (հազար տոննա)                   | 191.2 | 154.9 | 106.0 | 114.8 | 115.8 | 116.5 | 104.0 | 81.6  |
| Միս (հազար տոննա)                     | 84.7  | 48.4  | 51.3  | 49.1  | 49.3  | 48.3  | 50.2  | 52.6  |
| Կաթ (հազար տոննա)                     | 412.0 | 428.3 | 447.5 | 456.2 | 452.1 | 465.3 | 489.5 | 513.7 |
| Ձուլ (հազար տոննա)                    | 485.0 | 197.6 | 219.4 | 325.9 | 385.4 | 448.3 | 477.7 | 502.2 |
| Բուրդ (տոննա, ֆիզիկական քաշ)          | 2419  | 1463  | 1270  | 1311  | 1310  | 1081  | 1120  | 1180  |

Աղբյուր. ՀՀ ԱՎԾ (2003a; 2004d)

Լշում. 1999 տվյալները 2003-ի տեղեկատվությամբ զգալիորեն ցածր էին 2004-ի տեղեկատվությունից

Հացահատիկի բերքատվության ցուցանիշները մեծ տատանումներ են ապրել, քանի որ արտադրանքի ծավալը մեծապես կախված էր տեղումներից կամ ոռոգման համակարգի գորշունեությունից: Չզալիորեն աճել է ցածր ներդրումներ պահանջող տեսակների, օրինակ՝ բանջարեղենի ու պտուղների արտադրանքը, լրացնելով գյուղացիական տնտեսությունների դրամական եկամուտը, մինչդեռ մեծ ներդրումներ պահանջողներինը, օրինակ՝ խաղողինը, նվազել է: 2004 թվականի հոկտեմբերին Վայոց Ձոր կատարած այցելության ընթացքում պարզվեց, որ անհատ հողատերերը երբեմն հատել են խաղողի այգիները, ազատված հողերում հացահատիկ ցանելու համար, բացատրելով այն փոխառու միջոցների, արտադրության միջոցների և իրացման հնարավորությունների բացակայությամբ և, ամենակարևորը, պարենային ինքնաբավարարում ապահովելու ցանկությամբ: Նման դեպքեր տեղի են ունեցել նաև այլ մարզերում, օրինակ՝ Արարատում և Արմավիրում:

Հայաստանի, ինչպես նաև այլ ԱՊՀ պետությունների, անասնաբուծությունն անցումային շրջանում կտրուկ կրճատվել է (սակայն ոչ այնքան, որքան, օրինակ, Ռուսաստանի ու Ղազախստանի դեպքում): Այս կրճատումը հատկապես մեծ էր խոզերի, ոչխարների և այծերի, մսատու խոշոր եղջյուրավորների և թռչնաբուծության պարագայում, թեպետ թռչնաբուծության ոլորտը 2000-ականների սկզբին զգալի աճ է ապրում: Հետաքրքրական է, որ կովերի գլխաքանակն աստիճանաբար ավելանում է, ինչը կարելի էր ակնկալել անհատական գյուղացիական տնտեսությունների մեծ թիվը հաշվի առնելով: Նույնը տեղի է ունենում կաթի և ձվի արտադրության հետ, չնայած 1990-ականների սկզբին խոշոր մասնագիտացած համալիրների փլուզմանը և անասնակերի կենտրոնացված արտադրության վերացմանը:

Աղյուսակ 7: Անասնաբուծության հիմնական ցուցանիշները (1991-2003)

|                                 | 1991   | 1995   | 1998   | 1999   | 2000   | 2001   | 2002   | 2003   |
|---------------------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|
| Խոշոր եղջյուրավոր (1,000 գլուխ) | 640.1  | 503.7  | 469.1  | 478.7  | 497.3  | 514.2  | 535.8  | 565.8  |
| Այդ թվում կովեր (1,000)         | 250.9  | 276.2  | 256.2  | 262.1  | 264.9  | 270.1  | 280.8  | 291.0  |
| Խոզեր (1,000 գլուխ)             | 310.9  | 82.3   | 86.2   | 70.6   | 68.9   | 97.9   | 111.0  | 85.4   |
| Ոչխարներ և այծեր (1,000 գլուխ)  | 1186.3 | 636.0  | 546.3  | 548.6  | 540.0  | 592.1  | 602.6  | 628.5  |
| Ձի (1,000 գլուխ)                | 6.5    | 12.1   | 12.0   | 11.5   | 11.4   | 12.1   | 12.1   | 12.5   |
| Թռչուն (1,000 գլուխ)            | 9352.3 | 2913.6 | 3190.2 | 4255.1 | 3975.2 | 3130.3 | 3604.6 | 3830.0 |

Աղբյուր: ՀՀ ԱՎԾ (2003a; 2004d);

**Ներքին առևտրի պայմանների վատթարացումը**

Գյուղատնտեսության ոլորտի եկամուտների վրա բացասաբար անդրադարձող գործոններից էր նաև ներքին (գյուղատնտեսություն-արդյունաբերություն) առևտրի պայմանների վատթարացումը: Չնայած այս կարևոր ցուցանիշը պատշաճ հստակությամբ հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկությունների սակավությանը, ընդհանուր միտումը միանգամայն ակնհայտ է: 1997-1999 թվականներին գյուղմթերքի գների համաթվի (ԳԳՀ) 19.5 տոկոսով անկմանը հաջորդվեց աճի միտումը, որը պահպանվեց մինչև 2003 թվականը, և ներկայումս այն կազմում է 1997 թվականի մոտ 97 տոկոսը: Միաժամանակ, արդյունաբերական արտադրանքի գների համաթիվը՝ ԱԱԳՀ, կազմում է 1997 թվականի ցուցանիշի մոտ 133 տոկոսը, ինչը նշանակում է գյուղատնտեսության առ-տրի պայմանների՝  $ToT_D$ -ի վատթարացում 27.2 տոկոսով:

Աղյուսակ 8: Գնային համաթվեր (ՍԳՀ և ճյուղային ՍԳՀ)

| Դեկտեմբերի - նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, տոկոս | 1998   | 1999   | 2000   | 2001   | 2002   | 2003   | 2003 /1997 |
|--|--------|--------|--------|--------|--------|--------|------------|
| Սպառողական գնի համաթիվ                               | 98.7   | 102.0  | 100.4  | 102.9  | 102.0  | 108.6  | 115.2      |
| ԳԳՀ Գյուղատնտեսության արտադրանք                      | 87.4   | 92.1   | 101.1  | 106.9  | 97.4   | 114.1  | 96.7       |
| ԱԱԳՀ Արդյունաբերական արտադրանք                       | 108.2  | 103.8  | 100.4  | 96.4   | 100.9  | 121.1  | 132.8      |
| Փոփոխություն (1997 համեմատությամբ)                   | -19.2% | -28.3% | -27.8% | -20.0% | -22.7% | -27.2% |            |

Աղբյուրը: ՀՀ ԱՎԾ (2002b; 2003a)

Թեպետ 2000 և 2001 թվականներին դիտվեց  $ToT_D$  չնչին համեմատական բարելավում, 1997-2003 թվականների ընդհանուր միտումը խիստ բացասական է եղել: Հնարավոր պատճառներից մեկն այն է, որ չնայած այն փաստին, որ 1990-ականների ընթացքում Հայաստանի տնտեսությունը դարձավ համեմատաբար բաց, Թուրքիայի և Ադրբեջանի

կողմից շարունակվող շրջափակումը և հարևան Կրաստանում շարունակվող ներքին խռովությունները գործնականում Հայաստանին զրկեցին հիմնական տրանսպորտային ելքերից: Հետևաբար, երկիրը շարունակում է զրկված մնալ արտադրանքի ավելցուկը դրսում վաճառելու հնարավորություններից, ինչն իր հերթին հանգեցնում է գյուղատնտեսական արտադրանքի ներքին գների իջեցմանը (Griffin *et al*, 2002): Ներքին առևտրի պայմանների վրա բացասաբար անդրադարձող մեկ այլ կարևոր գործոն էր մեկուսացված և չկազմակերպված անհատական գյուղացիական տնտեսությունների սակարկային դիրքի թուլությունը (գնողների և վերամշակողների նկատմամբ), փոխառու միջոցների անմատչելիությունը և թերի ենթակառուցվածքը (ներառյալ պահեստավորման հնարավորությունների բացակայությունը): Թեպետ նույն ժամանակահատվածում գյուղմթերքի արտադրության ծավալների փոփոխության միտումները խիստ դրական էին (տե՛ս Աղյուսակ 6 և Աղյուսակ 7), վերը նշված գնային բացասական փոփոխությունների պարագայում արձանագրվեց գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների եկամուտի բացասական աճ:

### ***Արտադրության մասնագիտացումը և գյուղացիական տնտեսությունների մեծությունը***

Ինչպես նշվեց ներածական մասում, Հայաստանի գյուղատնտեսությունը տարբերակված է ըստ մարզերի, արտացոլելով բնակլիմայական պայմանների տարբերությունները (Արարատյան դաշտավայրը նախալեռնային և լեռնային շրջանների հակադրությամբ, հողային բարեփոխումների ընթացքում հատկացված հողերի չափերի տարբերությունը (հողերի առկայության և բնակչության խտության տարբերությունների հետևանքով, որոնց

**Ներդիր 1: Այցելություն Արարատ մարզի Սայաթ-Նովա համայնք** Այս գյուղում ակնհայտ է հողի ծայրահեղ մասնատվածությունը: Գյուղացիական տնտեսությունների մեծ մասն ունի միայն մեկ հողակտոր՝ 2,000-5,000 մ<sup>2</sup> մակերեսով: Ներկայումս բնակչությունն այդ հողակտորներում հիմնականում աճեցնում է հացահատիկ, ինչը խիստ անարդյունավետ է ՀԳԱ տեսակետից և նաև վատ է անդրադառնում հողի որակի վրա, քանի որ վերջին 10 տարիների ընթացքում հողակտորներում աճեցվում է միայն այս մշակաբույսը: Համայնքի պաշտոնյաներից մեկը բացատրեց, որ գյուղացիները չեն վստահում իշխանություններին, և գյուղատնտեսության լճացումից դուրս գալու ու գոյապահպանման մակարդակի արտադրությունից հրաժարվելու միակ տարբերակն ինչ-որ կոոպերատիվ կամ համատեղ կառույցի ստեղծումն է (Նշումներ Հայաստանից, 2004 թ. հոկտեմբեր)

արդյունքում Արարատի և Արմավիրի անհատական գյուղացիական տնտեսությունները բնութագրվում են համեմատաբար փոքր չափերով), և բուսաբուծության կամ անասնաբուծության մասնագիտացումների տարբերությունները: Աղյուսակ 9-ում բերված ըստ մարզերի ՀԳԱ-ի համեմատությունից հստակ երևում են Արարատի և Արմավիրի մեկ հեկտարից ստացվող ՀԳԱ-ի բարձր ցուցանիշները, որոնց մեծ տարբերությամբ հետևում են Լոռին, Կոտայքն ու Վայոց Ձորը:

Ֆիզիկական արտադրանքի վերաբերյալ տվյալներից հետևում է, որ առաջին երկու մարզերն արտադրում են բանջարեղենի, պտուղների և խաղողի մեծ մասը, մինչդեռ այլ մարզերը հիմնականում զբաղվում են ցածրարժեք հացահատիկի և կարտոֆիլի կամ անասնամթերքի արտադրությամբ<sup>11</sup>: Ինչպես նշվեց, գյուղատնտեսական մարզերում նկատվում է վտանգավոր միտում, երբ պարենային ապահովության նկատառումներով կրճատվում են խաղողի այգիների տարածքները և մեծացվում են հացահատիկի տակ զբաղված հողերը

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ ԱՎԾ (2003b), ՀՀ Մարզերը թվերով, 1998-2002, էջ 31-33

(տես ներդիր 1): Համեմատելով Աղյուսակ 9-ի տվյալները գյուղացիական տնտեսությունների միջին չափը ներկայացնող Աղյուսակ 2-ի 2000 թվականի տվյալների հետ կտեսնենք, որ ՀԳԱ-ի և տնտեսության չափերի միջև գործում է հստակ հակառակ կապ (տե՛ս պատկեր 1):

Աղյուսակ 9: ՀԳԱ ըստ մարզերի (1999-2002), 1 հա-ի հաշվարկով

| (1,000 դրամ/հա) | 1999   | 2000   | 2001   | 2002   |
|-----------------|--------|--------|--------|--------|
| Արագածոտն       | 489.7  | 310.8  | 422.7  | 503.1  |
| Արարատ          | 1271.4 | 1251.0 | 1289.4 | 1445.7 |
| Արմավիր         | 1246.1 | 1117.5 | 1262.6 | 1208.1 |
| Գեղարքունիք     | 477.6  | 445.8  | 563.1  | 630.6  |
| Լոռի            | 690.3  | 630.9  | 786.5  | 857.1  |
| Կոտայք          | 570.8  | 538.2  | 678.5  | 761.1  |
| Շիրակ           | 432.9  | 343.2  | 428.8  | 472.5  |
| Սյունիք         | 441.4  | 540.9  | 677.0  | 640.8  |
| Վայոց Ձոր       | 427.0  | 417.8  | 669.8  | 745.5  |
| Տավուշ          | 541.7  | 424.9  | 724.9  | 689.5  |

*Աղբյուրը:* ՀՀ ԱՎԺ (2003b), ՀՀ Մարզերը թվերով 1998-2002, էջ 30

Պատկեր 1: Համախառն գյուղատնտեսական արտադրանքի և տնտեսության միջին չափերի համադրում

Վերը նշված փաստարկներն ու ենթադրությունները, սակայն, չեն պատասխանում այն հարցին, թե արդյո՞ք առաջանում է առավել արդյունավետ և բարձրարժեք արտադրանքով բնութագրվող գյուղատնտեսություն, որտեղ անհատական տնտեսությունները հակված են ընդլայնել իրենց հողատարածքները (տե՛ս ստորև ներկայացված մանրամասները Հայաստանի հողի բաշխվածության փոփոխությունների վերաբերյալ):

#### 4. ՀՈՂԻ ԱՌՔՈՒՎԱԾԱՌՔԻ ԵՎ ՎԱՐՃԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՄԸ

Կարելի է պնդել, որ հողի առքուվաճառքի և վարձակալության շուկան Հայաստանում սկսեց հիմնականում ձևավորվել 1990-ականների վերջին: Ինչպես և բոլոր այլ գյուղատնտեսական հողերի շուկայի դեպքում, Հայաստանում կատարվող հողային գործարքները նույնպես ունեն իրենց որոշակի դրդապատճառները<sup>12</sup>: Հողի վաճառքի դրդապատճառը հիմնականում գյուղական աղքատությունն է: Չքավոր ընտանիքներն ի վերջո ստիպված են լինում տեղափոխվել քաղաքային վայրեր կամ հաճախ ընդհանրապես Հայաստանից դուրս, և ճարահատյալ վաճառում են իրենց հողը: Հայկական մտածելակերպի դեպքում սա իսկապես վերջին քայլն է, քանի որ հողի վաճառքով կտրվում է մարդուն ծննդավայրի կամ հարազատ վայրի հետ կապող պորտալարը: Հողի վարձակալության դեպքում, ինչպես նկատվում է Մոլդովայի գյուղատնտեսական հողի վարձակալության նորաստեղծ շուկայում, դրդապատճառներից են հողը մշակելու կարողությունների բացակայությունը (ինչպես, օրինակ, թռչակառունների խմբի դեպքում), կանխիկ դրամի անհրաժեշտությունը և ավելի լավ վարձատրվող աշխատանքի անկալությունը: Հող գնելու դրդապատճառների շարքում դիտվում է իրենց կացությունը բարելավելու և դրա համար հողատարածքը մեծացնելու հարևան տնտեսությունների ցանկությունը: Հաջորդաբար, ագրոարդյունաբերության ձեռնարկությունները, մասնավորապես գինու և կոնյակի արտադրության կամ մրգերի ու բանջարեղենի վերամշակման ոլորտներում, ուղղահայաց ինտեգրման միջոցով ձգտում են երաշխավորել հումքի բավարար քանակն ու որակը և հետևաբար գնում են հողեր և կատարում ներդրումներ համապատասխան ենթակառուցվածքի ստեղծման մեջ: Վերջապես, ֆինանսական խմբերի կամ հարուստ անհատների կողմից հող գնելը բացատրվում է հետագայում դրանք վերավաճառելու նպատակներով (քանի որ ակնկալվում է հողի գների բարձրացում): Այս բոլոր դրդապատճառներն անկախ են Հայաստանի նորաստեղծ հողի առքուվաճառքի և վարձակալության շուկաներում: Ըստ Աղյուսակ 12-ում բերված Կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական տվյալների, Հայաստանում նկատվում է հողի առքուվաճառքի և վարձակալության պաշտոնական շուկայի ձևավորում: Հողի շուկան արագ աճ ապրեց և 1998 թվականին գրանցված հողի առքուվաճառքի ընդամենը 268 գործարքների դիմաց, 2003 թվականին գրանցվեց արդեն 3,312 առքուվաճառքի գործարք: 2000 թվականից նկատվում է նաև գրանցված վարձակալության գործարքների թվի աճ. 2000 թվականի 103 գորշարքից այն 2001-2002 թվականների հասավ մոտ 4000-ի:

Հետաքրքրական է, որ հաջորդ տարվա ընթացքում գրանցված վարձակալության գործարքների թիվը կրկին նվազեց, առանց հայտնի պատճառների: Կարելի է ենթադրել, սակայն, որ վարձակալության շատ գործարքներ կատարվում են առանց պաշտոնական գրանցման, գործարքի բարձր արժեքը վճարելուց խուսափելով<sup>13</sup>: Մարզերի միջև տարբերու-

<sup>12</sup> Հայաստանի օրենսդրության մեջ «գործարք» փոխարեն օգտագործվում է «հողի օտարում» եզրը: Օտարումը ներառում է առքուվաճառք, ժառանգում կամ նվիրատվություն և չի ներառում վարձակալությունը: Հողային գործարքները նաև ներառում են վարձակալությունը և հողի գրավադրումը:

<sup>13</sup> Թեպետ գրանցման ծախսերը բավական ցածր են (ԱՄՆ 5 դոլարին համարժեք), բյուրոկրատական քաջշուկներն ու ժամանակի ծախսը բավական մեծ են: Բացի այդ, գյուղացիները ձգտում են խուսափել վարձակալությունից ստացված եկամուտից 10 տոկոսի շահութահարկ վճարելուց:

թյունները նույնպես մեծ են. Արարատում, Արմավիրում ու Կոտայքում կատարվում է գյուղատնտեսական հողի առքուվաճառքի բոլոր գործարքների 70.3 տոկոսը:

Աղյուսակ 10: Հայաստանի գյուղատնտեսական հողի շուկան (1998-2004)

| Գյուղ. հողի<br>օտարման<br>գործարքներ *                  | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | Ընդամենը |
|---|------|------|------|------|------|------|----------|
| Արագածոտն   | 29   | 51   | 80   | 78   | 250  | 379  | 867      |
| Արարատ  | 132  | 272  | 364  | 618  | 675  | 950  | 3011     |
| Արմավիր   | 42   | 141  | 318  | 270  | 341  | 588  | 1700     |
| Գեղարքունիք   | 37   | 12   | 8    | 17   | 63   | 216  | 353      |
| Լոռի  | 3    | 29   | 23   | 45   | 73   | 181  | 354      |
| Կոտայք  | 10   | 121  | 118  | 131  | 327  | 559  | 1266     |
| Շիրակ   | 10   | 32   | 47   | 69   | 171  | 282  | 611      |
| Սյունիք   | 2    | 0    | 2    | 14   | 15   | 66   | 99       |
| Վայոց Ձոր   | 1    | 11   | 48   | 16   | 12   | 64   | 152      |
| Տավուշ  | 2    | 7    | 15   | 29   | 6    | 27   | 86       |
| Ընդամենը  | 268  | 676  | 1023 | 1287 | 1933 | 3312 | 8499     |
| Հողի<br>վարձակալության<br>գործարքների<br>ընդհանուր թիվը | ..   | 127  | 103  | 4355 | 3915 | 2110 | 10610    |

Աղբյուրը. Կադաստրի պետական կոմիտե, *Անշարժ գույքի շուկան 1998-2003 թթ.*

\* - «օտարում» նշանակում է վաճառք, նվիրատվություն և ժառանգում:

Աղյուսակ 11: Պետական և սեփական հողերի վաճառքի տվյալները (2003, 2004 առաջին կիսամյակ)

|             | 2003        |       |              |        | 2004 առաջին կիսամյակ |       |              |        |
|-------------|-------------|-------|--------------|--------|----------------------|-------|--------------|--------|
|             | Պետական հող |       | Մասնավոր հող |        | Պետական հող          |       | Մասնավոր հող |        |
|             | Թվաքանակ    | Հա    | Թվաքանակ     | Հա     | Թվաքանակ             | Հա    | Թվաքանակ     | Հա     |
| Արագածոտն   | 72          | 69.7  | 301          | 197.2  | 7                    | 49.3  | 226          | 131.8  |
| Արարատ      | 12          | 47.5  | 903          | 298.5  | 190                  | 412.9 | 543          | 204.7  |
| Արմավիր     | 0           | 0.0   | 581          | 630.8  | 7                    | 225.8 | 353          | 326.3  |
| Գեղարքունիք | 23          | 160.8 | 192          | 326.6  | 0                    | 0.0   | 27           | 26.2   |
| Լոռի        | 0           | 0.0   | 164          | 136.2  | 0                    | 0.0   | 101          | 82.2   |
| Կոտայք      | 37          | 17.2  | 508          | 192.2  | 50                   | 101.4 | 648          | 245.4  |
| Շիրակ       | 0           | 0.0   | 280          | 295.0  | 0                    | 0.0   | 139          | 132.3  |
| Սյունիք     | 1           | 1.0   | 48           | 37.2   | 1                    | 0.1   | 32           | 35.2   |
| Վայոց Ձոր   | 0           | 0.0   | 57           | 50.3   | 5                    | 25.2  | 35           | 9.1    |
| Տավուշ      | 0           | 0.0   | 23           | 11.2   | 1                    | 1.2   | 41           | 38.5   |
| Ընդամենը    | 145         | 296.2 | 3057         | 2175.2 | 261                  | 815.9 | 2145         | 1231.7 |

Աղբյուրը. Կադաստրի պետական կոմիտե (2003), Գյուղատնտեսական հողի շուկան 2003 թ.; նույնը (2004), Գյուղատնտեսական հողի շուկան 2004 թ.-ի առաջին կիսամյակում:

Չնայած այս և նախորդ աղյուսակի տվյալների միջև որոշ անհամաձայնությունների, Աղյուսակ 11-ը բավական տեղեկատվական է առքուվաճառքի միջոցով փոխանցված գյուղատնտեսական հողի ծավալների վերաբերյալ: 2003 թվականին 145 գործարքների միջոցով պետությունից մասնավոր սեփականատերերին փոխանցվեց մոտ 296 հեկտար (միջինը 2.0 հեկտար յուրաքանչյուր գործարքի դեպքում): Մասնավոր 3,057 գործարքների

միջոցով փոխանցվեց 2,175 հեկտար (յուրաքանչյուրի միջինը 0.7 հեկտար): Ծավալների տարբերությունը բացատրվում է նրանով, որ առաջին դեպքում օտարվել են հիմնականում արոտավայրեր, իսկ վերջինիս դեպքում՝ վարելահողեր: 2004 թվականի առաջին կիսամյակում առաջին ցուցանիշն աճեց, կազմելով 815.9 հեկտար 261 գործարքի միջոցով (մեծացնելով միջին ծավալը), իսկ երկրորդում՝ 1,232 հեկտար 2,145 գործարքի միջոցով (սվազեցնելով 2003 թվականի միջինը): Թեպետ այս տվյալները վկայում են առքուվաճարքի գործարքների թվի ավելացման մասին, թեկուզ և գրեթե գրոյական մակարդակից, վերջին 6 տարիների ընթացքում առքուվաճարքի միջոցով փոխանցված գյուղատնտեսական հողի ծավալը կազմեց ընդհանուրի 2 տոկոսից էլ քիչ: Սա նշանակում է, որ հողի առքուվաճարքի պաշտոնական շուկան գրեթե գոյություն չունի: Որոշ վկայությունների համաձայն, հողի ոչ պաշտոնական վարձակալությունը, դեպի քաղաքային վայրեր կամ արտասահման արտագաղթի դեպքերում, մեծ տարածում է գտնում, հանգեցնելով նախկինի համեմատությամբ փոքր ինչ զգալի հողի համակետրոնացմանը: Վերջապես, ակնկալվում է, որ հողի առքուվաճարքի շուկան արագորեն կընդլայնվի, իսկ վաճառվող գյուղատնտեսական հողերի ծավալները կմեծանան, քանի որ կառավարությունը հետամուտ է սեփականության իրավունքի գրանցման ամբողջացմանը: Այս պահի դրությամբ գրանցումը սկսվել կամ անգամ ավարտվել է 929 համայնքներից 778-ում և ակնկալվում է, որ այն կավարտվի 2005 թվականի վերջին:

### ***Հողերի համակետրոնացումը***

Ներկայումս նկատվում է Հայաստանի գյուղացիական տնտեսությունների մեծությունների աճող դիֆերենցացում: Այս տարբերակումը հիմնականում պատճառաբանվում է հողի վարձակալությամբ կամ առքուվաճարքով, քանի որ փոքր հողատերերից շատերը չունեն հողը մշակելու համար անհրաժեշտ միջոցներ և գիտելիքներ և անցնում են արտագյուղատնտեսական գործունեության: Չնայած ստույգ տվյալների բացակայությանը, այս բացատրությունը բավական հավանական է թվում: Հողի բաշխվածության վերաբերյալ պաշտոնական տվյալները (սեփականության և պաշտոնապես վարձակալված հողերի վերաբերյալ) վկայում են տեղեկատվության լուրջ պակասի մասին: Կադաստրի պետական կոմիտեն հավաքագրում է առանձին տվյալներ համայնքային կամ մարզային գրասենյակներից, սակայն ամբողջ երկրի ծավալով հողի բաշխվածության վերաբերյալ տվյալները դեռ բացակայում են<sup>14</sup>: Ներկայումս պատրաստվում է վերամշակված Հողային հաշվեկշիռը, որը լույս կտեսնի 2005 թվականին (վերջինը հրապարակվել է 1997 թվականին): Հետևաբար, սույն վերլուծության շրջանակներում կօգտվենք «Հայաստանի սոցիալական միտումները» հրապարակման մեջ (թիվ 6, 2004 թվականի նոյեմբեր), լույս տեսած վերջին ուսումնասիրության տվյալներից, որոնք հիմնված են 6,000 տնային տնտեսությունների շրջանում կատարված ուսումնասիրության վրա:

<sup>14</sup> Ինչպես հետագայում կնշվի, առաքելության հատուկ խնդրանքով Կադաստրի պետական կոմիտեն պատրաստեց տվյալների հատուկ փաթեթ 20 համայնքների վերաբերյալ, որն ընդգրկում է տեղեկություններ հողի բաշխվածության և հողի շուկայի գործարքների վերաբերյալ: Հայտնում ենք մեր շնորհակալությունը այս աշխատանքի համար:

Աղյուսակ 12: Հողի բաշխվածությունը և համակետրոնացումը ըստ մարզերի (2003)

| Բնակչության տոկոսը | <0.0-1.0 | <1.0-3.0] | >3.0 | Տնտեսության միջին չափը (1) | Տնտեսության միջին չափը (2) |
|--------------------|----------|-----------|------|----------------------------|----------------------------|
| Շիրակ              | 22.3     | 41.4      | 36.3 | 2.83                       | 2.28                       |
| Սյունիք            | 36.4     | 37.2      | 26.4 | 2.48                       | 2.87                       |
| Լոռի               | 42.6     | 28.3      | 29.1 | 2.13                       | 1.72                       |
| Արագածոտն          | 44.0     | 40.0      | 16.0 | 1.79                       | 1.26                       |
| Գեղարքունիք        | 49.0     | 36.1      | 14.9 | 1.77                       | 1.42                       |
| Տավուշ             | 50.5     | 46.0      | 3.5  | 1.18                       | 1.01                       |
| Արմավիր            | 52.4     | 43.7      | 3.9  | 1.16                       | 0.68                       |
| Կոտայք             | 54.6     | 25.4      | 20.0 | 1.58                       | 1.03                       |
| Վայոց Ձոր          | 62.3     | 24.9      | 12.8 | 1.34                       | 1.18                       |
| Արարատ             | 82.8     | 16.3      | 0.9  | 0.57                       | 0.48                       |

Աղբյուրը. ՀՍՄ, No. 6 (2004).

Նշում: (1) ՀՍՄ (2004) Ուսումնասիրություն; (2) ՀՀ ԱՎԾ 1997 Հողային հաշվեկշիռ (մասնավոր հողեր)

Աղյուսակ 12-ը ներկայացնում է այս տվյալները երեք խմբերի (0.0-1.0, 1.0-3.0, և 3.0-ից մեծ, համեմատելով մարզի միջին մեծությունների վերաբերյալ ուսումնասիրության արդյունքային տվյալները Կադաստրի պետական կոմիտեի 1997-ի Հողային հաշվեկշիռի տվյալների հետ: Փոքր ինչ մանրամասնեցված մակարդակով ուսումնասիրությունը գնահատում է հողի բաշխվածությունն ըստ հողակտորների հետևյալ խմբերի. <0.0-0.5], <0.5-1.0], <1.0-2.0], <2.0-3.0], <3.0-5.0], <5.0-10.0] և >10.0 հեկտար (պատկեր 2): Օրինակ, Շիրակի տնտեսությունների 4.5 տոկոսը 10 հեկտարից մեծ էին, իսկ Լոռիում և Սյունիքում այս ցուցանիշը կազմել է 2.1 տոկոս:

**Ներդրում 2:**

- Ձեռնարկատեր գյուղացիական տնտեսություններ:** Ունեն բավարար միջոցներ, սեփական տեխնիկա, վերամշակող սարքավորումներ: Վարձակալության են տալիս սարքավորումները և հաճախ արտադրում սերմնացու, վարձակալում են հող (15-500 հա); պահում են անասուններ (5-50 խոշոր եղջյուրավորների գլուխ); վարձում են աշխատողներ; ապահովված են փոխառում միջոցներով և ունեն իրացման կետեր, վաճառում են արտադրանքի ավելի քան 50 տոկոսը:
- Ընտանիքի սպառման համար արտադրող տնտեսություններ:** Ունեն սահմանափակ միջոցներ, քիչ տեխնիկա: Տնօրինում են սեփական հողը (1.5-5 հա), այլ հող չեն վարձակալում, բայց վարձակալության են հանձնում իրենցը կամ թողնում այն անմշակ: Փոխառու միջոցների և իրացման շուկաների մատչելիությունը սահմանափակ է, վաճառում են արտադրանքի մոտ 20-50 տոկոսը:
- Խոցելի գյուղացիական տնտեսություններ:** Չունեն միջոցներ, այդ թվում շրջանառու: Վարձակալության են տալիս հողը, թողնում են այն անմշակ, կամ հող ընդհանրապես չունեն: Փոխառու միջոցներն անմատչելի են, շուկայի մատչելիությունը սահմանափակ: Վաճառում կամ փոխանակում են արտադրանքի <20 տոկոսը, հիմնականում զբաղված են իրենց տնտեսությունից դուրս:

Սակայն որոշ տեղեկությունների համաձայն, ներկայումս ոչ պաշտոնական վարձակալության միջոցով ձևավորում են առավել խոշոր տնտեսություններ: Օրինակ, Սյունիքի մարզում վերջերս կատարված ուսումնասիրությունը հայտնաբերեց հիմնականում վարձակալած 15-ից 500 հեկտար հող մշակող ձեռնարկատիրական գյուղացիական տնտեսություններ (ICRA, 2004: 42): Այս ուսումնասիրությունն առաջարկեց գյուղացիական տնտեսությունների տիպոլոգիա, որն առավել կիրառելի է Արարատյան դաշտավայրից դուրս և ըստ որի

տարբերակվում են ձեռնարկատիրական, ընտանիքի սպառման համար արտադրող, և խոցելի կամ աղքատ գյուղացիական տնտեսություններ (տե՛ս Ներդիր 2): Այս բավական մոտավոր տարբերակումը, սակայն, կիրառելի չէ Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի համար, որոնք բնորոշվում են չափազանց փոքր գյուղացիական տնտեսությունների մեծ քանակությամբ: Հավանական է նաև, որ այս տարբերակման վերջին խումբը նույնպես պետք է տրոհվի հողի համակետորոնացման շրջանակներից դուրս, հաշվի առնելով տնտեսությունից դուրս վարձատրվող զբաղվածության կամ ձեռնարկատիրական գործունեության առկայությունը: Այսուամենայնիվ, առաջարկվող տիպոլոգիան բավական օգտակար է Հայաստանի գյուղական վայրերում ներկայումս առաջացող տարբերակումը վերլուծելու համար: Պատկեր 2 ներկայացնում է ՀՍՄ ուսումնասիրության տվյալները գյուղատնտեսական հողերի մասնատվածության վերաբերյալ:

## Պատկեր 2. Հողերի բաշխումը ըստ մարզերի, 2004 թվական

Չրոյից մինչև մեկ հեկտար մեծությամբ տնտեսությունների տվյալների վերլուծությունը հուշում է, որ Տավուշի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց Ձորի և Արարատի իմարզերը բնորոշվում են այս խմբի տնտեսությունների 50 տոկոսից ավել տեսակարար կշռով: Վերջինում նկատվում է հողի մասնատվածության ծայրահեղ (և լավ հայտնի) դեպք, այն է՝ գյուղացիական տնտեսությունների 82.8 տոկոսը 1 հեկտարից փոքր են (Աղյուսակ 12), իսկ տնտեսությունների 54.2 տոկոսը՝ 0.5 հեկտարից փոքր: (Հայաստանի սոցիալական միտումները, 2004, թիվ 6; տե՛ս նաև Պատկեր 2)<sup>15</sup>: Մարզերի այս հերթականությունը չնչին բացառություններով ճիշտ հակառակ է գյուղացիական տնտեսությունների միջին չափերը ներկայացնող

<sup>15</sup> Ըստ Պատկեր 2-ի, չափազանց փոքր գյուղացիական տնտեսությունների (<0.0-0.5] հեկտար) մեծ մասը կենտրոնացած է Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում:

հերթականությանը, քանզի որքան փոքր է չափազանց փոքր տնտեսությունների տեսակարար կշիռը, այնքան մեծ է տնտեսության միջին չափը մարզի մակարդակով: Վերադառնալով հողի շուկայի քննարկմանը, թվում է, որ սկզբնականում տարբերակումն առաջացել է պետության կողմից իրականացված անհավասար հողի սեփականաշնորհման հետևանքով: Այս երևույթը կարելի է նաև բացատրել հողի համակետրոնացման շուկայական գործընթացով, թեպետ վարձակալության ոչ պաշտոնական շուկայի վերաբերյալ տվյալները սահմանափակ են: Առկայության դեպքում այս տվյալները կարող էին շեշտել գործընթացի կարևորությունը փոփոխվող ագրարային կառուցվածքում:

Սեփականության իրավունքի գրանցման գործընթացի ավարտը միանշանակ կնպաստի հողի առքուվաճառքի գործարքների թվի ավելացմանը և առավել դինամիկ տնտեսությունների ձեռքում հողի հետևողական համակետրոնացմանը: Չափազանց փոքր գյուղացիական տնտեսությունները մեծ բարդությունների կհանդիպեն Հայաստանի բաց շուկայի մրցակցությանը դիմակայելիս, սակայն իրենց համար հողը կշարունակի լինել եկամտի հիմնական աղբյուր և աղքատության խորացումից պաշտպանող միջոց: Գյուղացիական տնտեսությունների ապագա չափերը, կախված կլինեն նաև արտադրվող մշակաբույսերից, տեխնոլոգիաներից և կապիտալ/աշխատուժ գործակցից:

Հողի համակետրոնացումը չպետք է շփոթել հողակտորների միավորման հետ, որն իրենից ներկայացնում է փոխանակման, առքուվաճառքի և փոխհատուցման հանրային միջոցներով նույն գյուղացիական տնտեսությանը պատկանող մասնատված հողակտորների միացում, որի նպատակն է նվազեցնել տրանսպորտային ծախսերը և վերացնել տեխնոլոգիական սահմանափակումները, օրինակ, տեխնիկա օգտագործելու անհնարությունը: Այս վերջին քայլը բավական հրատապ է Հայաստանի տնտեսության համար, քանի որ սեփականատերերի մեծամասնությունն ունի միջինը 3 հողակտոր, միմյանցից հաճախ բավական մեծ հեռավորությամբ սփռված: Հողակտորները (հատկապես Արարատյան դաշտավայրում) հաճախ անհարմար չափեր ունեն. օրինակ, 5-10 մետր լայնություն և 1,000 մետր երկարություն<sup>16</sup>: Կառավարությունը, Կադաստրի պետական կոմիտեի և Հողօգտագործման պլանավորման ինստիտուտի միջոցով մշակել է պիլոտային ծրագիր Արարատի, Արմավիրի և Կոտայքի 8 համայնքներում հողերի միավորման վերաբերյալ<sup>17</sup>: Ավելին, ՊՀԿ-ն ֆինանսավորմամբ իրականացվող ևս մեկ պիլոտային ծրագիր կենտրոնացած է հողի համակետրոնացման և հողի կառավարման բարելավման շուրջ<sup>18</sup>: Դժբախտաբար, այս ծրագիրը սխալմամբ ընկալվում է, որպես հանուն հողի համակետրոնացման գյուղացիներին հողը վաճառել ստիպող նախաձեռնություն: Այս օրինակը ցույց է տալիս հողերի միավորման խնդրի քաղաքական և սոցիալական զգայունության բարձր աստիճանը: Կառավարությունը նաև քայլեր է ձեռնարկում հողի հետագա մասնատումից խուսափելու ուղղությամբ, արգելելով բաժանել ժառանգած հողերը:

<sup>16</sup> Հարցազրույց հայաստանյան ագրարային ՀԿ-ի ներկայացուցչի հետ, 8 հոկտեմբեր 2004, Երևան:

<sup>17</sup> CFAO (2003), Armenia Country Paper: Հողային քաղաքականություն. Պատրաստված «Հարավային Կովկասում տարածաշրջանային հողային քաղաքականություն» կոնֆերանսի համար, Թբիլիսի, 2003 թվական, փետրվարի 22-26: [http://www.aplr.org/conference/en/country\\_papers/countrypaper\\_armenia\\_eng.htm](http://www.aplr.org/conference/en/country_papers/countrypaper_armenia_eng.htm)

<sup>18</sup> ՊՀԿ-ի ծրագիր (TCP/ARM/3004), իրականացման ժամկետը՝ 2004-2006թթ., Կադաստրի պետական կոմիտեի համագործակցությամբ:

## 5. ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ. ՀՈՂԵՐԻ ՓՈՒՍԿՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Հայաստանի հողային հայեցակարգերը վերլուծելիս չափազանց կարևոր է անդրադառնալ հողի սեփականության վերաբերյալ տեղի ունեցող ինստիտուցիոնալ ձևափոխումներին, որոնք ներառում են պետական հողերի զանգվածային փոխանցում համայնքների իրավասությանը: Այս փոխանցումը նաև նշանակում է, որ համայնքները կտնօրինեն այս հողը իրենց հայեցողությամբ, վաճառելով, վարձակալելով կամ կառավարելով այն, կամ էլ համայնքային սեփականության իրավունքի համակարգ սահմանելով: Սեփականության իրավունքների համակարգի այս արմատական փոփոխությունը կարող է անգամ առավել հեռու գնացող հետևանքներ ունենալ: Վերադառնալով Այուսակ 2-ի մանրամասներին, նշենք, որ 2003-2005 թվականներին ընթացքում համայնքներին կփոխանցվեն իրենց սահմաններից ներս գտնվող ընդհանուր ծավալով 599,757 հեկտար գյուղատնտեսական հողատեսակներ (ներառյալ 127,099 հեկտար վարելահող և 411,080 հեկտար արոտավայրեր), ինչը կազմում է համայնքների սահմաններից ներս գտնվող պետական հողերի ամբողջ ծավալը: Մինչև փոխանցումն այս հողը նույնպես կարող էր օգտագործվել կամ վարձակալության հանձնվել անհատ գյուղացիական տնտեսություններին<sup>19</sup>: Վարձակալության գումարներն ու հարկերը փոխանցվում էին կետրոնական իշխանություններին, զրկելով տեղական իշխանություններին այդքան անհրաժեշտ եկամուտներից: «Հանրային սեփականության» տիրույթի ներքո այս փոխանցումը նշանակում է, որ համայնքների սեփականությունը հաղիսացող հողերից ստացված ֆիսկալ եկամուտները (օրինակ, վարձակալությունից և վաճառքից) ամբողջությամբ մնալու են համայնքներում: Կադաստրի պետական կոմիտեն կցանկանար, որ այդ եկամուտները հատկացվեին հողերի կառավարման և համայնքային զարգացման ռազմավարությունների մշակմանը, որոնք ներկայումս իրականացվում են կենտրոնական թերի ֆինանսավորմամբ, մինչդեռ կառավարության այլ օղակներում կան այլ կարծիքներ այս եկամուտների օգտագործման վերաբերյալ: Արդյունքում, դեռևս չկան հստակ կանոնակարգեր այս միջոցների օգտագործման վերաբերյալ, թեպետ կենտրոնական կառավարության առաջնորդությունը այս խնդրում խիստ անհրաժեշտ կլինի:

Ակնհայտ է, որ եկամուտների ակնկալիքներից ելնելով համայնքային իշխանությունները մեծ գայթակղություն կունենան վաճառել այս հողերը: Նման քայլը կարող է հակասել այլ գերակա խնդիրների, այն է՝ տեղական մակարդակով հողի, հատկապես արոտավայրերի, կառավարման ինստիտուցիոնալ բարելավման շահերին: Որպես աղքատամետ հողային հայեցակարգի մի մաս, հողի փոխանցման ծրագիրը պետք է օգտագործվի չափազանց փոքր գյուղացիական տնտեսությունների թույլ դիրքերն ամրապնդելու համար: Ավելին, համայնքային արոտավայրերը, սեփականաշնորհման դեպքում, չափազանց սահմանափակ մատչելիություն կունենան սեփական արոտավայր չունեցող գյուղացիական տնտեսությունների համար, բերելով այս և ջրային պաշարների նման կարևոր միջոցների մատչելիության անհավասարությանը: Հետաքրքրական է, որ այս հարցն արդեն իսկ շոշափվել է 1998 թվականի Համաշխարհային բանկի մի ուսումնասիրության մեջ: Ինչպես նշվում է Լերմանի ու Միրզախանյանի 2001: 31) կողմից՝ «...գյուղացիները հիմնականում բացասաբար են

<sup>19</sup> Երկար ժամանակով (որոշ իմաստով անօրինական) հողի վարձակալության որոշ դեպքերն ընդգրկվեցին սեփականության գրանցման գործընթացում:

արտահայտվում արոտավայրերի սեփականաշնորհման մասին. պատասխանողների 74 տոկոսը դեմ են, և միայն 9 տոկոսը՝ կողմ...»:

Աղյուսակ 13: 309 համայնքներում ավարտված պետական պահուստային ֆոնդի հողերի փոխանցման ծրագրի արդյունքները (09/2004 դրությամբ)

| Յեկտար      | Ընդամենը գյուղ. հողեր | Մասնավոր  | Համայնքային | Պետական  | Այլ   |
|-------------|-----------------------|-----------|-------------|----------|-------|
| Արագածոտն   | 69,801.3              | 18,682.6  | 48,874.7    | 2,244.0  | 0.0   |
| Արարատ      | 56,448.6              | 21,900.8  | 32,030.5    | 2,388.9  | 128.4 |
| Արմավիր     | 81,874.8              | 35,348.0  | 43,194.2    | 3,332.6  | 0.0   |
| Գեղարքունիք | 46,345.0              | 18,523.1  | 26,706.3    | 1,115.6  | 0.0   |
| Լոռի        | 42,596.3              | 9,887.8   | 22,377.6    | 10,331.4 | 0.0   |
| Կոտայք      | 32,454.8              | 10,689.8  | 18,797.1    | 2,961.1  | 6.9   |
| Շիրակ       | 82,186.6              | 32,243.3  | 43,444.0    | 6,478.8  | 20.5  |
| Սյունիք     | 74,646.9              | 15,660.2  | 53,473.1    | 5,513.5  | 0.0   |
| Վայոց Ձոր   | -                     | -         | -           | -        | -     |
| Տավուշ      | -                     | -         | -           | -        | -     |
| Ընդամենը    | 486,354.3             | 162,935.6 | 288,897.5   | 34,365.9 | 155.8 |

Աղբյուրը. Տվյալները տրամադրված են Կադաստրի պետական կոմիտեի կողմից

Նշում. «Մասնավոր» հողերի դասակարգն առաջացավ 1990-րի սկզբի սեփականաշնորհման արդյունքում: Պետական հողի կարգավիճակը կպահպանվի այնքանով, որքանով դրանք գտնվում են համայնքների սահմաններից դուրս:

Աղյուսակ 13-ը ներկայացնում է հողերի փոխանցման ներկա կարգավիճակը: 2004 թվականի հոկտեմբերի դրությամբ այն ավարտված էր 929 քաղաքային և գյուղական համայնքներից 309-ում, փոխանցելով համայնքների իրավասությանը 288,898 հեկտար ընդհանուր մակերեսով պետական հողեր: Ինչպես նշվեց նախորդ բաժնում, այս հողի միայն չնչին մասը սեփականաշնորհվեց հողի շուկայի միջոցով:

Այս դիտարկումը նաև հաստատվում է 2004 թվականի նոյեմբերին Կադաստրի պետական կոմիտեի կողմից 20 համայնքների վերաբերյալ տրամադրված տվյալների վերլուծությամբ (տե՛ս ծանոթագրություն 10 և Հավելված I)<sup>20</sup>: Այս ընտրանքի ներսում 2001-ից 2004-ը տեղի ունեցած հողի վաճառքների թիվը չնչին էր, իսկ վաճառված հողակտորները՝ չափազանց փոքր (ավելի շատ տնամերձ կամ ամառանոցային հողատարածքներ հիշեցնող), միայն մի քանի բացառություններով (ընդամենը մեկ գործարք 38 հեկտարի վերաբերյալ)<sup>21</sup>: Խնդիրն այստեղ ոչ թե իրավիճակի կտրուկ փոփոխությունն է, բայց կարգավորման և թափանցիկության պակասը, որը բերում է հողի համակետրոնացման անցանկալի տարբերակների և այս խիստ սահմանափակ ռեսուրսի չարաշահմանը: Այս 20 (յուրաքանչյուր մարզից երկուական) համայնքների վերաբերյալ մանրամասն տվյալները, որոնք կարող են օգտագործվել միայն ընդհանուր միտումներ և ցուցանիշներ ուրվագծելու նպատակով, և չեն կարող ընդհանրացվել ամբողջ երկրի համար, պարունակում են ևս մի քանի կարևոր

<sup>20</sup> Հայտնի չէ, թե Կադաստրի պետական կոմիտեն ի՞նչ մեթոդաբանական հիմքեր է կիրառել այս համայնքների ընտրության ընթացքում:

<sup>21</sup> Վերջերս ընդունված կառավարության որոշմամբ սահմանվել է օտարման ենթակա համայնքային հողերի 20 հեկտարի սահմանային չափը:

փոփոխականներ: Այս պահի դրությամբ համայնքների սեփականության ներքո է գտնվում իրենց սահմաններից ներս գտնվող վարելահողերի միայն մոտ 18 տոկոսը: Որոշ համայնքներում վարելահողերը ոռոգվում են ամբողջությամբ, մինչդեռ միջինում ոռոգվում է վարելահողերի ընդամենը մեկ երրորդը (տե՛ս Հավելված I): Արոտավայրերը, որ «ընտրանքի» համայնքներին փոխանցված հողերի մեծ մասն են կազմում, բոլոր հողերի ընդամենը 58 տոկոսն են (իսկ Հայաստանի բոլոր գյուղատնտեսական հողատեսակների մոտ 50 տոկոսը, տե՛ս Աղյուսակ 2):

Հողերի փոխանցման ծրագիրը, որն իրոք կարելի է համարել հողային բարեփոխումների երկրորդ փուլ, կարող է կարճաժամկետ կտրվածքով մեծ ազդեցություն ունենալ Հայաստանի ագրարային կառուցվածքի վրա, հատկապես հստակ ձևակերպված հողային հայեցակարգերի բացակայությունը: Ավելին, հողային բարեփոխումների այս նոր փուլը պետք է օգտագործել (հանրային/մասնավոր և անգամ վարկային միջոցների ֆինանսավորմամբ) իրենց գոյատևումն ապահովելու համար հողի մեծ կարիք ունեցող աղքատ տնային տնտեսություններին, հաշվի առնելով գյուղական ոչ-գյուղատնտեսական տնտեսության թերզարգացվածությունը (Բեգեմեր և Դեյվիս, 2003) և քաղաքային վայրերում աշխատատեղերի սակավությունը: Այս պահը նաև կարևոր է արտադրության մեջ զբաղված աշխատուժի փոխանակման, արտադրանքի համատեղ իրացման և արտադրության միջոցների գնման կոոպերատիվների (այսպես կոչված «մեկ նպատակ հետապնդող» կոոպերատիվների) կամ ասոցիացիաների ստեղծման համար: Հողային հայեցակարգերի այլ խնդիրներից են համայնքային արոտավայրերի կառավարումը, արդեն իսկ կայացած գյուղացիական տնտեսությունների հողերի համախմբումը (առկա ծայրահեղ մասնատվածությունը հաղթահարելու նպատակով) և հողի կայուն կառավարման տեղական ծրագրերի մշակումը (Կադաստրի պետական կոմիտեի կողմից մշակված փորձնական քայլերի օրինակով), որոնք կնպաստեն գյուղատնտեսական արտադրությունը արդիականացնելու հնարավորությունների մեծացմանը:

## **6. ՇՈՒԿԱՆԵՐ. «ՀՈՂԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ»**

Անկախացումից ավելի, քան տաս տարի հետո Հայաստան այցելողների վրա մեծ տպավորություն է թողնում Երևանի կենտրոնում նկատելի հարաբերական բարեկեցությունը: Սակայն մայրաքաղաքի սահմաններից մի փոքր հեռավորության վրա այս տպավորությունները տեղ են տալիս հատկապես հեռավոր գյուղական վայրերի և մայրաքաղաքի միջև խիստ անհավասար իրավիճակի գիտակցմանը: Այս առեւելի տարբերությունը դրսևորվում է կենսամակարդակի և կյանքի որակի, ենթակառուցվածքի և ծառայությունների որակի մեջ: 1988 թվականի երկրաշարժից տուժած (հյուսիս-արևելք) և Ադրբեջանից ներգաղթածների մեծ զանգվածներ ընդունած վայրերում առավել բարձր են աղքատությունը և չքավորությունը (Համաշխարհային Բանկ, 2002): Գյուղական աղքատությունը նախկինում քաղաքայինից ցածր էր առաջինների հողին մոտ լինելու պատճառով: Սակայն, ինչպես արդեն նշվեց, 2003 թվականին գյուղական աղքատությունը գերազանցեց քաղաքայինը, պահպանելով 1996 թվականի մակարդակի վրա (տե՛ս Աղյուսակ 4):

Թեպետ գյուղական վայրերում հողի մատչելիությունը շարունակում է բարձր մնալ, գյուղացիական տնտեսություններից աղքատները կամ չափազանց աղքատները նրանք են, որ կամ շատ քիչ հող ունեն, կամ էլ առհասարակ հողագուրկ են: Արարատի մարզի օրինակի վրա երևում է, որ մասնավոր հողի անգամ չնչին ավելացումը զգալիորեն նվազեցնում է աղքատության վտանգը: Սակայն գյուղացիական տնտեսությունների համար, հողի մատչելիությունից բացի կան շատ այլ կարևոր գործոններ: Գյուղական վայրերի և փոքր քաղաքների համապարփակ զարգացման հեռանկարների բացակայությունը կայուն և արդար զարգացման ռազմավարություն հետապնդող Հայաստանի անցումային տնտեսության աքիլեսյան գարշապարն է դարձել: Ներկայիս աճի մոդելը, ինչպես նաև աճի արդյունքները, ակնհայտ քաղաքամետ շեղում ունեն: Ավելին, շուկաների ներկա մասնատվածության հետևանքով ավելացված արժեքի բաշխման շղթայում գյուղատնտեսության առաջնային արտադրողները ստանում են եկամուտի նվազագույն մասը, տուժում են գների մեծ տարբերությունից, փոխառու միջոցների, արտադրության միջոցների, տեխնոլոգիաների և իրացման շուկաների անհասանելիությունից: Այս մասում կվերլուծվեն «հողից այն կողմ» շուկաներից և կառույցներից մի քանիսը և փորձ կկատարվի տեղակայել հողային հայեցակարգերը Հայաստանի գյուղական զարգացման ավելի լայն համատեքստում: Կարևորագույն հարցերից են ոռոգումը, վարկավորումը, ծառայություններն ու իրացման շուկաները, ինչպես նաև գյուղական ենթակառուցվածքի՝ ճանապարհների և կապի, վատթար վիճակը:

### ***Ոռոգումը որպես գյուղատնտեսական զարգացման «առանցք»***

Ոռոգումն անկասկած Հայաստանի գյուղատնտեսական (բուսաբուծության) արտադրության կարևորագույն ասպեկտներից է: Զայքայվող ոռոգման համակարգերի ստույգ վիճակի վերաբերյալ տվյալների սակավության պատճառով բավական բարդ է դատել այդ ոլորտի կարիքների մասին: Հայաստանի կառավարությունը դասում է վարելահողերի համար ոռոգման համակարգերի վերականգնումը գերակա խնդիրների շարքում, ինչն ապացուցվեց ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող Հազարամյակի մարտահրավերներ ծրագրին ներկայացված հայտերով, որոնք ոռոգման ենթակառուցվածքի վերականգնման ուղղությամբ մեծ ներդրումային ծրագիր են նախատեսում:

Երկրի ոռոգման համակարգի ներկա իրավիճակի մասին տեղեկությունները սահմանափակ են: 1998 թվականի տնային տնտեսությունների իրենց ուսումնասիրության ընթացքում Լերմանը և Միրզախանյանը նշում են (2001), որ ոռոգվում են վարելահողերի հաշվարկային 18 տոկոսը, ինչը կազմում է 252,000 հեկտար: ՊՀԿ-ը (իր FAOSTAT տվյալների շտեմարանում) բերում է մոտ 283,000 հեկտարի գրեթե անփոփոխ տվյալներ: Այս տվյալներին բավական բարդ է վստահել, քանի որ ԱՊՀ գրեթե բոլոր պետություններում արձանագրվեց խոշոր, էներգատար ոռոգման համակարգերի սրընթաց քայքայում<sup>22</sup>:

<sup>22</sup> ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կողմից հրապարակված Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության նախագիծը (ՀՀ ԳՆ, 2004: 5) նշում է, որ պոտենցիալ ոռոգելի 274,000 հեկտարի ծավալներից իրականում ոռոգելի է միայն 200,000-ից 210,000 հա:

Յետևաբար կարելի է ենթադրել, որ ոռոգելի հողերի ծավալը ներկայումս վերը նշվածից զգալիորեն փոքր է: Այս ենթադրությունը հաստատվում է ՄԱԶԾ-ի կողմից կատարված տնային տնտեսությունների վերջին ուսումնասիրության միկրո-տվյալներով (ՅՍՍ, թիվ 6, նոյեմբեր 2004 թ.): Ուսումնասիրված տնային տնտեսությունների 44.2 տոկոսը նշեցին, որ մասամբ կամ ամբողջությամբ չեն օգտագործում իրենց սեփական կամ վարձակալած հողը<sup>23</sup>: Որպես հիմնական պատճառ նշվում է ոռոգման բացակայությունը կամ սահմանափակությունը (ըստ գյուղացիական տնտեսությունների 26.3 տոկոսի): Պատասխանողների 14.3 տոկոսը նշեց, որ հիմնական պատճառը հողի վատ որակն է: Մյուս կողմից, նույն ուսումնասիրության տվյալների համաձայն, գյուղատնտեսական հողերի 28.6 տոկոսն է ոռոգելի, ինչը նախորդ տարվա համեմատությամբ զգալիորեն ցածր ցուցանիշ է: Չնայած այս հակասական տվյալների, ակնհայտ է, որ ոռոգումը հաջողակ գյուղատնտեսական արտադրության հիմնական գրավականներից է և պահանջում է դոտացիաների, օգտագործման իրավունքի և գնագոյացման վերաբերյալ ինստիտուցիոնալ փոփոխություններով զուգորդված մեծ ներդրումներ<sup>24</sup>:

### ***Ֆինանսական շուկաները և վարկային միջոցների մատչելիությունը***

Փոխառու միջոցների բացակայությունը գյուղացիական տնտեսությունների կողմից իրենց գյուղատնտեսական հողի արդյունավետ օգտագործումը խոչընդոտող երկրորդ հիմնական գործոնն է: ՄԱԶԾ տնային տնտեսությունների վերջին ուսումնասիրության արդյունքների համաձայն, պատասխանողների մոտ 21 տոկոսը նշեցին, որ հողը մշակելու համար դրամական միջոցներ չունեն, և հետևաբար այն մասամբ կամ ամբողջությամբ թողնում են անմշակ կամ հանձնում վարձակալության: Հայաստանի, ինչպես նաև շատ այլ երկրների, փոքր գյուղացիական տնտեսությունների համար ֆինանսական ծառայությունների մատչելիությունը բավական բարդ խնդիր է: Պետական ֆինանսական կառույցների մեծ մասը լուծարված է, իսկ նոր առևտրային բանկերի մեծ մասը գյուղատնտեսական ոլորտը, որոշ բացառություններով, չեն վարկավորում: Գյուղատնտեսական ոլորտի վարկավորման մեջ քիչ թե շատ մեծ մասնաբաժին ունի ACBA բանկը, որը, ըստ իր սեփական տվյալների, 2003 թվականի վարկավորման իր փաթեթի 61 տոկոսը հատկացրել էր գյուղատնտեսությանը: Այս ցուցանիշը բավական բարձր է թվում, սակայն ընդհանուր թվերի չափազանց ցածր մակարդակի բերումով զարմանալի չէ, որ 2003 թվականին ACBA բանկի գյուղատնտեսության վարկավորման փաթեթը կազմել է ընդամենը 8.8 մլն ԱՄՆ դոլար, կամ նույն տարվա ՀԳԱ-ի մեկ տոկոսից փոքր ինչ ավել: Որոշ առաջընթաց է նկատվում միկրովարկավորման ոլորտում, ստեղծվել են մոտ 596 գյուղացիական կոոպերատիվներ, ընդհանուր առմամբ 20,491 անդամներով: Սակայն վարկավորումը, ինչպես նաև վարկավորման ծառայություններ տրամադրող տարածաշրջանային կառույցների բացակայությունը, նույնիսկ օրինակ, Դրոզդատանի կամ Մոլդովայի համեմատությամբ, շարունակում է մեծ խնդիր հանդիսանալ:

<sup>23</sup> ՀՀ ԳՆ (2004:11) նշում է, որ 2001-ին չի մշակվել վարելահողերի 35.9 տոկոսը:

<sup>24</sup> «Եթե հողը չի ոռոգվում, անիմաստ է այն որպես սեփականություն պահելը: Ոռոգելի հողի արժեքն անջրդի հողի արժեքի տասնապատիկն է»: Հարցազրույց Կադաստրի պետական կոմիտեի աշխատակցի հետ (12 հոկտեմբեր 2004):

Վերջապես, Հայաստանի գյուղացի արտադրողները մեծ մտավախություններ ունեն կապված ԱՀԿ առջև ստանձնած պարտավորությունների շրջանակներով սահմանվելիք նոր հարկային ռեժիմի վերաբերյալ: Այս խնդրի շուտափույթ լուծումը, օրինակ, որոշ ծավալից ցածր շրջանառություն ունեցող տնտեսությունների համար բարդ ԱՀԿ հաշվարկներից և վարչարարությունից խուսափելու համար պարզեցված հարկային մուծումների կիրառման միջոցով, չափազանց օգտակար կլիներ:

### ***Արտադրության միջոցները և տեխնոլոգիաները***

Վերաբաշխողական հողային բարեփոխումների իրականացմամբ ու փոքր գյուղացիական տնտեսությունների մեծ քանակի առաջացմամբ, գնողունակության նվազմամբ և ներկրված ներդրանքի և տեխնիկայի գների բարձրացմամբ այդ ներդրանքի և տեխնիկայի նկատմամբ պահանջարկը կտրուկ նվազեց: Թեպետ վերջին տարիներին նկատվում է ներկրված արտադրության միջոցների նկատմամբ պահանջարկի աճ, 1990-ականների ընթացքում արձանագրվել է ազոտի պարարտանյութի խիստ սահմանափակ օգտագործում, իսկ այլ պարարտանյութեր, թանկ լինելու պատճառով, գրեթե ընդհանրապես չեն օգտագործվել: ՊՀԿ-ի FAOSTAT տվյալների շտեմարանի համաձայն, Հայաստանի գյուղատնտեսությունում օգտագործվող ազոտի պարարտանյութի ծավալը 1992 թվականի 25,000 տոննայից 2001-ին իջել է 5,000-ի, 2002 թվականին կրկին բարձրանալով 8,200 տոննայի: Այս ցուցանիշները համեմատելի են այլ ԱՊՀ պետությունների հետ, որտեղ պարարտանյութերի ներկայիս օգտագործումը նույնպես կազմում է խորհրդային ժամանակաշրջանի մակարդակի 10-20 տոկոսը<sup>25</sup>: Թեպետ նախկինում գրանցվել են պարարտանյութերի գերօգտագործման կամ սխալ օգտագործման շատ դեպքեր, ընդհանուր օգտագործման նվազումը բացասաբար է անդրադարձել հողի որակի վրա<sup>26</sup>: Արտադրության միջոցների իրացման մեծ մասն իրականացվում էր մասնավոր ընկերությունների կողմից, որոնք երբեմն հանդես են գալիս, որպես Հայաստանում գործող խոշոր ընկերությունների գործակալներ: Չները համեմատաբար բարձր են (տե՛ս ToT<sub>0</sub> վերաբերյալ մասը), և փոխառու միջոցների բացակայության պայմաններում դրանց օգտագործումը սահմանափակ է, ինչը բացասաբար է անդրադառնում բերքատվության վրա: Նույնը վերաբերում է տեխնիկայի օգտագործմանը, որը, ինչպես և ԱՊՀ ամբողջ տարածքում, կտրուկ նվազել է: Առկա գյուղատնտեսական տեխնիկական հիմնականում սպառել է իր օգտակար կյանքի ժամկետը, իսկ նոր մեքենաներ գնելու միջոցներ չկան<sup>27</sup>: Առավել բարվոք վիճակում գտնվող գյուղացիները, որոնք ունեն կամ գնել են տեխնիկա, ներկայումս այն վարձով են տալիս հարևան տնտեսություններին: Հողի մասնատվածությունը և անգամ աշխարհագրությունը, սակայն, հաճախ կանխում են այդ տեխնիկայի արդյունավետ օգտագործումը:

<sup>25</sup> ՀՀ ԳՆ (2004:5) նշում է, որ «անցյալ տասնամյակում հանքային պարարտանյութերի օգտագործումը նվազեց 10 անգամ, օրգանականներինը՝ 18 անգամ, իսկ բույսերի պահպանման միջոցներինը՝ տաս անգամ»:

<sup>26</sup> Չրոյցների ընթացքում հաճախ քննարկվում էր էկոլոգիապես մաքուր արտադրանքի արտադրության հարցը և նշվում, որ պարարտանյութ և պեստիցիդներ չօգտագործելը բավարար պայման է: Այն փաստը, որ շուկայի այս հատվածը պահանջում է արտոնագրման, փաթեթավորման և գովազդային մեծ ծախսեր և ներդրումներ, հիմնականում անտեսվում էր:

<sup>27</sup> ՀՀ ԳՆ (2004: 5). «Գյուղատնտեսական տեխնիկայի 93 տոկոսը ներկայումս մաշված է»:

### **Գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկաները**

Գյուղատնտեսական մթերքների իրացման շուկաների ապահովումը փոքր գյուղացիական տնտեսությունների լուրջ խնդիրներից է: Առաջինը, նրանք արտադրում են անմիջապես բաց շուկայի համար և հետևաբար չեն օգտագործում վերամշակող ձեռնարկությունների հետ առաքման պայմանագրեր (որոշ պահածոների և գինու արտադրության ձեռնարկությունների բացառությամբ): Արտադրողներն իրենց արտադրանքը բերում են շուկա բերքը հավաքելուց անմիջապես հետո, խաթարելով տեղական շուկան և իջեցնելով գները: Երկրորդը, գյուղացիական տնտեսությունների սակարկման դիրքերն ամրապնդող մարկետինգային կոոպերատիվների թիվը խիստ սահմանափակ է, իսկ գործողները հիմնականում ֆինանսավորվում են դոնորների կողմից: Արտադրանքի շուկայահանման և ներդրանքի գնման այս կոոպերատիվների անհրաժեշտությունը չափազանց մեծ է: Երրորդը, Հայաստանի հիմնական շուկան գտնվում է Երևանում, իսկ շրջաններում գործող խոշոր մեծածախ շուկաներ գրեթե չկան: Տարածությունները մեծ են, հատկապես հաշվի առնելով հեռավոր շրջանների ճանապարհների անմխիթար վիճակը: Միջնորդները հաճախ ոչ-մրցակցային վարվելակերպ են ցուցաբերում, պահանջելով բարձր շահույթ ապրանքը վերավաճառելու համար: Վերջապես, երկիրը ոչ միայն չունի ծովային մատույցներ, այլ նաև շրջափակման է ենթարկվում հարևան Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, իսկ Վրաստանի տարածքով բեռնափոխանակումները խիստ բարդ են (սակայն հավանաբար կբարելավվեն մոտ ապագայում՝ ռուսական շուկաները գրավելու հնարավորություն ստեղծելով): Այս ամենը սահմանափակում է արտահանման հնարավորությունները և տեղական սահմանափակ պահանջարկի և տարածաշրջանում առևտրի սահմանափակության հետ մեկտեղ բերում տեղական գների իջեցմանը: Չարմանալի չէ, որ գյուղմթերքի իրացումն եկամտաբեր չէ գյուղացիական տնտեսությունների համար, և դրանցից շատերը կամ մասամբ են զբաղվում գյուղարտադրությամբ, կամ այլ ոչ-գյուղատնտեսական աշխատանք են փնտրում և ժամանակավորապես կամ մշտապես գաղթում են դեպի քաղաքային վայրեր, փորձելով հավելել իրենց խղճուկ եկամուտն այլ աղբյուրներից կամ արտագնա աշխատանքի մեկնած բարեկամներից ստացվող գումարներից:

### **7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԱՂՔԱՏԱՄԵՏ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ**

Այսպիսով, ներկայացվեցին և քննարկվեցին Հայաստանի գյուղատնտեսական հողերի վերաբերյալ մի շարք կարևոր երևույթներ: Նախ և առաջ, առկա է հողերի համակենտրոնացման միտում, որի զարգացման ուղղությունը, սակայն, դժվար կլինի կանխագուշակել: Կադաստրի տվյալները դեռ այս միտումը չեն արտահայտում, սակայն ոչ պաշտոնական վարձակալական շուկայի տվյալները միշտ չէ, որ ճշգրտորեն արտահայտվում են պաշտոնական տվյալներում, և որոշ վկայությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ հողը վարձակալության հանձնելու դրդապատճառները, մասնավորապես աղքատությունը, հողատարածքների փոքրությունը և արդյունավետ հողագործության համար անհրաժեշտ միջոցների պակասը, չափազանց կարևոր են: Սեփականաշնորհման պաշտոնական գրանցման գործընթացի ավարտը կնպաստի հողի շուկայի արդյունավետու-

թյան բարձրացմանը և սրանով կիսթանի հողերի համակենտրոնացման բնական գործընթացը, բերելով տնտեսապես առավել կենսունակ գյուղացիական տնտեսությունների առաջացմանը: Միջնաժամկետ և հեռանկարային առումներով այս սցենարը միանգամայն կիրառելի է Հայաստանի համար, սակայն մոտ ապագայում այն պարզապես կհանգեցնի աղքատության և չբավորության խորացմանը, առաջացնելով հողի արագ համակետրոնացում փոքրաթիվ խմբերի ձեռքում՝ բերելով արդեն իսկ չափազանց աղքատ հողի փոքր սեփականատերերի հետագա աղքատացմանը:

Հաջորդ խնդիրը հողային բարեփոխումների ներկայիս երկրորդ փուլն է, որը ներառում է վարելահողը և արոտավայրերի մեծ մասի զանգվածային փոխանցումը համայնքներին, իր կարևորությամբ դուրս է գալիս զուտ վարչական գործողության շրջանակներից: Համայնքային իշխանությունները, որ տեղական ինքնակառավարման առումով բավական մեծ անկախություն են վայելում, հնարավորություն կստանան մասնավորեցնել, վարձակալել կամ կառավարել իրենց հողային ռեսուրսները: Հետևաբար, համայնքներն պետք է ի վիճակի լինեն օգտագործել այդ սակավ հողային ռեսուրսը խոցելի գյուղացիական տնտեսությունների կենսամակարդակի պահպանման և բարձրացման նպատակով, այլ ոչ թե դրանք օտարեն մասնավոր հատվածին խոշոր հողատարածքներով: Առաջին և առավել նախընտրելի տարբերակը կպահանջի պետական ֆինանսավորում, մինչդեռ երկրորդը գրավիչ կոիտվի տեղական իշխանությունների կողմից, գոյացնելով խիստ անհրաժեշտ դրամական հոսքեր: Հարկ է նշել նաև, որ հողին վերաբերող հայեցակարգերը չպետք է դիտել այլ հարցերից առանձին, քանի որ Հայաստանի գյուղատնտեսական հողերը կարևոր նշանակություն չունեն եթե բացակայում են ոռոգումը, շուկաները և ինստիտուցիոնալ կառույցները: Հեռանալով այս երեք հիմնական կետերից կարող ենք տարբերակել հայեցակարգերի երկու մեծ խմբեր, որոնցից առաջինը վերաբերում է ինստիտուցիոնալ դաշտին, իսկ երկրորդը՝ Հայաստանում գյուղատնտեսության և գյուղական վայրերի կայուն զարգացման ընդհանուր հայեցակարգերին: Ինստիտուցիոնալ առումով կարելի է ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

- Հողային բարեփոխումների սոր փուլը, որի ընթացքում հանրային գյուղատնտեսական հողերի մնացորդի մեծ մասը կփոխանցվի համայնքներին, կարելի է օգտագործել հետևյալ չորս եղանակներով. փոխանցված հողերի մեծ մասն օգտագործել որպես պահուստ՝ հողակտորների ուղղակի հատկացման միջոցով անապահով գյուղացիական տնտեսությունների կենսամակարդակը բարձրացնելու համար (հանրային և մասնավոր աղբյուրների կամ վարկերի ֆինանսավորմամբ). խթանել հողերի միավորումը (փոխանակումների և միաձուլման միջոցով) փորձնական վայրերում իրականացվող հողերի միավորման ծրագրերի դոնորների ֆինանսավորմամբ և ստեղծել հաջողված նախադեպեր, ապահովել օտարվող հողերի աճուրդների արդար (և թափանցիկ) մատչելիությունը, միաժամանակ խուսափելով, հողակտորների սահմանային մեծությունը սահմանելու միջոցով, փոքրաթիվ վերնախավին մեծ հողակտորներ վաճառելուց, քանի որ վերջինը կբերի գյուղական վայրերում գործազրկության ավելացմանը և առանց ներդրումներ կատարելու կօգտագործի այս հողերը շահադիտության կամ հարկերից խուսափելու նպատակներով: Վերջապես,

անհրաժեշտ է մշակել հայեցակարգեր և դրանց իրականացման համար տեղական կառույցներ, որոնք օգտագործման համատեղ իրավունք սահմանելով, վարձակալության եղանակները մշակելով և այլ քայլերի միջոցով կապահովեն համայնքային արտադարյանի մատչելիությունը համայնքի բոլոր անդամների համար:

- Անհրաժեշտ է ակտիվորեն խթանել գյուղատնտեսական շուկաներում արտադրության միջոցների և արտադրանքի առքուվաճառքով և արտադրական գործունեության մեջ աշխատուժի ներգրավմամբ զբաղվող կոոպերատիվների, միությունների և այլ նման խմբերի ստեղծումը, ինչը փոքր գյուղացիական տնտեսություններից շատերին կհանի փակուղուց կամ դժվարին կացությունից: Հասարակայնության իրազեկման քարոզարշավների միջոցով անհրաժեշտ է տեղ հասցնել այն միտքը, որ այս տեսակի կոոպերատիվները կամ միությունները ոչ մի ընդհանրություն չունեն խորհրդային կոլեկտիվների հետ, և որ զարգացած երկրներից շատերում նման միությունները գյուղատնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն են: Այն փակուղին, որում այսօր հայտնվել է Հայաստանի գյուղատնտեսությունը ոչ միայն նպաստում է ցածր արտադրողականության պահպանմանը, այլ նաև հանգեցնում է փոքր տնտեսությունների համար իրացման շուկայում բանակցելու ուժի կորստի, որի լուծման ճանապարհը ենթադրում է համայնքներում փոխադարձ վստահության հիման վրա համագործակցություն: Տեղական մակարդակով նշված ինստիտուցիոնալ փոփոխությունների իրականացումը կարող է նաև դրականորեն անդրադառնալ գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա, քանի որ կոոպերատիվներն ու միություններն ավելի մեծ հնարավորություններ ունեն հողի մշակման և բերքահավաքի համար գյուղատնտեսական սարքավորումներ վարձակալելու առումով:
- Նպատակահարմար է առավել «պաշտոնականացնել» հողի վարձակալության շուկան, խթանելով հողի վարձակալության գործարքների պետական գրանցումը (իջեցնելով նոտարական մուծումների ու վճարվելիք հարկերի չափը), քանի որ հակառակ դեպքում այս շուկայի մեծ մասը կգործի ստվերում, խոչընդոտելով ցանկացած ողջամիտ հողային հայեցակարգի իրագործում (ներկայիս իրականության անբավարար իմացությունն արդեն իսկ փաստ է): Անհրաժեշտ է հեշտացնել և կարգավորել հողի վարձակալման ընթացակարգերն ու վարչարարությունը: Խիստ անհրաժեշտ է նաև վարձակալության գումարների պարտադիր վճարման ապահովումը, ինչպես նաև վարձակալության պայմանագրի երկու կողմերի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական արշավների իրականացումը: Վերջապես, պետք է անցկացնել հողերի վարձակալության շուկայի ուսումնասիրություն բոլոր առկա պաշտոնական և ոչ-պաշտոնական ձևերը գույքագրելու նպատակով (նման փորձ վերջերս կիրառվել է Մոլդովայում):
- Անհրաժեշտ է ավարտել բոլոր գյուղատնտեսական հողերի սեփականատերերի սեփականության գրանցումը, ինչը զգալիորեն կհեշտացնի հողի առքուվաճառքի գործարքների իրականացումը, ինչպես նաև հողի գրավի օգտագործումը (որին վերաբերող գործընթացը ներկայումս նախատեսվում է ավարտել մինչև 2005 թվականի վերջը): Կենտրոնական և տեղական իշխանությունները պետք է առավել

ակտիվորեն մասնակցեն հողի կայուն կառավարման պլանավորման այնպիսի գործընթացներին, որոնք հաշվի են առնում գյուղատնտեսական և բնապահպանական առանձնահատկությունները, հողակտորների մասնատվածությունը և հողի իրական օգտագործումը, նպատակ ունենալով աջակցել առկա ագրարային կառույցների ձևափոխմանը դեպի տնտեսապես առավել կենսունակ գյուղացիական տնտեսություններ: Այս նպատակով Հայաստանի Կառավարությունը պետք է կարևորի ապակենտրոնացումը և տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, խթանի մարզային և համայնքային տնտեսական զարգացումը և բավարար հանրային ներդրումներ կատարի այդ զարգացումն ապահովելու համար:

- Անհրաժեշտ է զարգացնել կենտրոնական և մարզային իշխանությունների կարողությունները հայեցակարգերի վերլուծության և մշակման առումով, հատկապես գյուղական տնային տնտեսությունների կենսունակությունն ապահովելու վերաբերյալ: Հանդիսանալով 1990-ականների սզբին իրականացվող հողային բարեփոխումների ուշադրության կիզակետը, գյուղական տնային տնտեսությունները վերջին տարիներին, կարծես թե, դուրս մղվեցին իշխանությունների գերակա խնդիրների շրջանակից: Հավանաբար, պատճառներից մեկն այն էր, որ ակնկալվում էր փոքր գյուղացիական տնտեսությունների տնտեսական կենսունակությունն ապահովող միջավայրի ստեղծմամբ զբաղվող շուկաների և կառույցների առաջացում: Նման բան տեղի չունեցավ, և գյուղական աղքատությունը շարունակում է պահպանել իր բարձր մակարդակը, իսկ շուկաների և կառույցների բացակայությունն ավելի շատ օրինաչափություն է, քան բացառություն:

Ճյուղային և ենթաճյուղային հայեցակարգերի առումով նպատակահարմար է դիտարկել հետևյալ առատարկությունները.

- Գյուղական վայրերում ակնհայտորեն առկա է հանրային ներդրումների անհրաժեշտություն: Գյուղական ճանապարհները հաճախ քայքայված են, նույնը վերաբերում է նաև կապի միջոցներին: Ենթակառուցվածքային ծրագրերի արտաքին ֆինանսավորումը (օրինակ՝ սփյուռքից) հնարավոր տարբերակներից է, և արդեն իսկ իրականություն է դարձել: Ինչպես արդեն նշվեց, ոռոգումը կենսական կարևորություն ունի, և կան որոշ առաջընթացի նշաններ, նախ և առաջ դոնորների ֆինանսավորման շնորհիվ:
- Գյուղատնտեսական գործունեության վարկավորումը շարունակում է չափազանց սահմանափակ մնալ, և գրավների ապահովումը՝ չափազանց բարդ, հիմնականում սեփականության իրավունքի վերաբերյալ անորոշության կամ հողային միջոցների և այլ ակտիվների արժեքի անբավարարության կամ դրանց չափազանց վատթար վիճակում լինելու հետևանքով: Անհրաժեշտ է շեշտադրել վարկավորման կառույցների ստեղծումը և խրախուսել բանկերին իրենց փոխառու միջոցների ավելի մեծ մասը գյուղատնտեսական գործունեությանը (այդ փոխառու միջոցների մեծ մասը կլանող գյուղմթերքի վերամշակման արդյունաբերությունից բացի), տրամադրելու ուղղությամբ: Այս գործընթացի նպատակներից մեկը պետք է լինի տնտեսապես

կենսունակ գյուղացիական տնտեսությունների կապիտալացումը, ինչպես նաև ստեղծվող գյուղացիական կոոպերատիվներին կամ միավորումներին վարկավորելու համար անհրաժեշտ միջոցների տրամադրումը:

- Անհրաժեշտ է մշակել կոոպերատիվների և միությունների ստեղծումը խթանող հատուկ հարկային մոտեցումներ: Այսինքն, կոոպերատիվների և միությունների ստեղծումը պետք է փոքր գյուղացիական տնտեսությունների համար ֆինանսական (շահութահարկի, որոշ արտոնությունների և վարչարարության և գրանցման վճարների) տեսակետից գրավիչ լինի: Անհրաժեշտ է հրատապ կերպով մշակել և իրականացնել Հայաստանի արդեն իսկ ոչ այդքան մրցունակ գյուղատնտեսական ոլորտին չվնասող հարկային քաղաքականություն (օրինակ՝ որոշ սահմանված ծավալից ցածր շրջանառություն ունեցող փոքր գյուղացիական տնտեսությունների նկատմամբ հարկերի պարզեցված, օրինակ՝ միանվագ, վճարման մոտեցման կիրառում), որը կպատրաստի գյուղատնտեսության ոլորտի հաջորդական անցումը ԱՀԿ-ի նկատմամբ Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների իրականացմանը և չի բերի ավելորդ կորուստների:
- Գյուղական վայրերում ՓՄՁ-ների աջակցությունն արմատական ձևափոխում կառաջացնի, բերելով փոքր գյուղացիական տնտեսությունների զգալի թվի մասնակի կամ ամբողջական տեղափոխմանը դեպի այլ ոլորտներ: Անցումային շրջանում, սակայն, նման տնտեսություններին անհրաժեշտ է ապահովել այլընտրանքային կամ հավելյալ զբաղվածությամբ և եկամուտի աղբյուրներով: ՓՄՁ-ները նաև առանցքային դեր են խաղում գյուղացիական տնային տնտեսությունների ոչ-գյուղատնտեսական գործունեության կարևոր մասը կազմող արտադրության միջոցների ապահովման և գյուղմթերքների վերամշակման ոլորտներում:
- Վերջապես, անհրաժեշտ է շեշտադրել տեխնիկական աջակցության և խորհրդատվության, բայց ամենակարևորը՝ գյուղական վայրերում վերապատրաստման և կրթության հնարավորությունների ապահովման միջոցով մարդկային կապիտալի պահպանումն ու հարստացումը և Հայաստանի ագրոարդյունաբերական ոլորտի կայացմանը նպաստող այդ մարդկային կապիտալի զարգացման մեջ այլ ներդրումների իրականացումը:

Ներկայացված սցենարներից առաջինը որոշ չափով հոռետեսական է, և բխում է սոցիալապես և տնտեսապես քայքայված գյուղերը լքող 15-50 տարեկան աշխատուժի արտագաղթի փաստից: Այս սցենարին է համապատասխանում նաև հողերի ճարահատյալ վաճառքը, որից սակայն անպայմանորեն չի հետևում, որ կձևավորվեն տնտեսապես կենսունակ գյուղացիական տնտեսություններ: Երկրորդ՝ սահմանափակ աճի սցենարն ավելի է համապատասխանում ներկա իրավիճակին, որի ներքո տեղի կունենա քաղաքային շրջանների արագ զարգացման որոշակի տարածում դեպի գյուղական շրջաններ, կկատարվեն արտաքին ներդրումներ ենթակառուցվածքների և հաղորդակցման միջոցների վերականգման մեջ (շտկելով դրանց չափազանց քաղաքամետ ուղղվածությունը), սակայն չի նկատվի գյուղատնտեսական արտադրության իրական վերածնունդ, մի գուցե բացառու-

թյամբ որոշ վերամշակման ենթաճյուղերի: Այս սցենարը գոյությունը մի կերպ «քարշ» տալու սցենարն է: Երրորդ սցենարն առավել կենտրոնացած կլինի գյուղական և քաղաքային տնտեսությունների ինտեգրման վրա, փակելով եկամուտների և մարդկային զարգացման մակարդակի միջև արագ աճող ճեղքվածքները: Այս սցենարի իրականացումը կպահանջի ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ռազմավարության «գյուղամետ» ուղղվածություն, հողերի հաջորդական միավորումների զուգընթաց ոչ-գյուղատնտեսական տնտեսության և այլ «քաղաքային» տնտեսական ոլորտերի կողմից աշխատուժի ավելցուկի կլանում: Այս առավել լավատեսական սցենարը կառաջացնի գյուղատնտեսության կայուն աճ, կձևավորի կոոպերատիվներ և գյուղացիական փոքր տնտեսությունների միություններ, որոնք իրենց անդամներին թույլ կտան զանազան շուկաներում հանդես գալ առավել ամուր դիրքերից, արդյունավետորեն մրցակցելով առավել կապիտալացված միջին չափի գյուղացիական տնտեսությունների հետ: Թե՛ առաջիններն ու թե՛ վերջիններն ամուր կապեր կհաստատեն գյուղմթերքների վերամշակման արդյունաբերության հետ և կընդլայնեն իրենց արտադրանքի արտահանման հնարավորությունները, իսկ միևնույն ժամանակ ընդլայնված և զարգացած գյուղաբնակ տնային տնտեսությունները՝ օգտվելով հողերի փոխանցման արդյունքում առաջացող նոր հնարավորություններից, կհաղթահարեն իրենց պարենային և եկամտային աղքատությունը: Այս սցենարը կպահանջի տարածքային զարգացման համապարփակ ռազմավարություն և համաձայնեցված ինստիտուցիոնալ և հայեցակարգային բարեփոխումներ:

Հավելված I: Հայաստանի 20 համայնքների սեփական և համայնքային գյուղատնտեսական հողատեսակները (2004 թվականի հոկտեմբերի դրությամբ)

| Համայնք                    | Արագածոտն |         | Արարատ   |        | Արմավիր   |        | Գեղարքունիք |           | Լոռի    |       | Կոտայք   |           | Շիրակ  |          | Սյունիք |         | Վայոց Ձոր |      | Տավուշ  |              |
|----------------------------|-----------|---------|----------|--------|-----------|--------|-------------|-----------|---------|-------|----------|-----------|--------|----------|---------|---------|-----------|------|---------|--------------|
|                            | Վարդենուտ | Արտաշատ | Դարակերտ | Արևշատ | Գուշակերտ | Արագած | Գանձակ      | Հայրավանկ | Վահագնի | Դեբետ | Հանքավան | Աղավնաձոր | Արևշատ | Մեղրաշեն | Խոտ     | Բրնակոտ | Արփի      | Ռինդ | Achajur | N.K. Aghbiur |
| <b>Վարելահողեր</b>         |           |         |          |        |           |        |             |           |         |       |          |           |        |          |         |         |           |      |         |              |
| Սեփական                    | 361       | 283     | 216      | 82     | 265       | 226    | 868         | 300       | 269     | 62    | 0        | 192       | 506    | 780      | 504     | 1581    | 173       | 259  | 636     | 544          |
| Համայնքային                | 71        | 59      | 43       | 63     | 48        | 58     | 191         | 28        | 37      | 53    | 63       | 38        | 112    | 198      | 28      | 230     | 50        | 111  | 103     | 188          |
| <b>Պտղատու/խաղողի այգի</b> |           |         |          |        |           |        |             |           |         |       |          |           |        |          |         |         |           |      |         |              |
| Սեփական                    | 79        | 1       | 4        | 112    | 42        | 37     | 0           | 0         | 19      | 0     | 0        | 0         | 0      | 0        | 49      | 5       | 0         | 32   | 118     | 29           |
| Համայնքային                | 9         | 0       | 0        | 2      | 0         | 11     | 0           | 0         | 0       | 0     | 0        | 0         | 0      | 0        | 0       | 0       | 0         | 0    | 0       | 0            |
|                            | 7         | 137     | 286      | 122    | 313       | 284    | 97          | 17        | 19      | 30    | 0        | 113       | 54     | 0        | 16      | 557     | 163       | 67   | 300     | 74           |
| <b>Ոռոգելի (%)</b>         |           |         |          |        |           |        |             |           |         |       |          |           |        |          |         |         |           |      |         |              |
| <b>Արտեր</b>               |           |         |          |        |           |        |             |           |         |       |          |           |        |          |         |         |           |      |         |              |
| Սեփական                    | 79        | 71      | 0        | 2      | 0         | 0      | 392         | 178       | 42      | 141   | 0        | 110       | 0      | 0        | 30      | 0       | 0         | 50   | 183     | 0            |
| Համայնքային                | 9         | 99      | 0        | 0      | 0         | 0      | 11          | 1         | 224     | 29    | 132      | 34        | 7      | 0        | 3       | 30      | 0         | 0    | 5       | 61           |
| <b>Արոտավայրեր/այլ</b>     |           |         |          |        |           |        |             |           |         |       |          |           |        |          |         |         |           |      |         |              |
| Սեփական                    | 0         | 0       | 4        | 0      | 0         | 0      | 0           | 0         | 0       | 0     | 0        | 0         | 0      | 0        | 0       | 0       | 0         | 0    | 0       | 0            |
| Համայնքային                | 1178      | 2125    | 59       | 124    | 510       | 304    | 1503        | 528       | 1179    | 340   | 1317     | 1009      | 796    | 435      | 999     | 2825    | 722       | 2712 | 1177    | 727          |
| Համայնքից հողի վաճառք      | 0         | 2.7     | 12.1     | 38     | 0         | 66.8   | 8.36        | 19.8      | 0       | 0     | 0        | 10.1      | 0      | 0        | 0       | 0       | 0         | 0    | 0.13    | 0            |
|                            |           | /1      | /85      | /1     |           | /5     | /70         | /18       |         |       |          | /23       |        |          |         |         |           |      | /2      |              |

Աղբյուրը. Տվյալները տրամադրված են Կաղաստրի պետական կոմիտեի կողմից, հատուկ պատվիրված ուսումնասիրության շրջանակներում: Վայոց Ձորի և Տավուշի համայնքներին դեռ հող չէր փոխանցվել (տե՛ս նաև Աղյուսակ 13-ը):

## Օգտագործված կյուրերի ցանկը

- ACBA Բանկ (2002-2003), Տարեկան հաշվետվություն: Երևան
- ՀՀ Կառավարություն (2003), Հայաստանի կայուն տնտեսական զարգացման քաղաքականություն: ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն: Երևան
- Bezemer, Dirk J. and Junior R. Davis (2003), 'The Rural Non-Farm Economy in Transition Countries: Findings from Armenia', in: Max Spoor (Ed.), Transition, Institutions and the Rural Sector. Lanham and Oxford: Lexington Books, Rowman and Littlefield, pp.163-84.
- CFOA (2003), 'Armenia Country Paper: Land Policy'. Paper prepared for the South Caucasus Regional Land Policy Conference in Tbilisi, 22-26 February, 2003.
- [http://www.aplr.org/conference/en/country\\_papers/countrypaper\\_armenia\\_eng.htm](http://www.aplr.org/conference/en/country_papers/countrypaper_armenia_eng.htm)
- Deiniger, Klaus (2003), *Land Policies for Growth and Poverty Reduction*. World Bank Policy Research Report (Washington: The World Bank and Oxford University Press).
- ՏՀՀԿ (2004), *Տնտեսական քաղաքականություն և աղքատություն, Տնտեսական զարգացման հետազոտական կենտրոնի պարբերական*, Երևան, #3 և 8:
- FAO (2003), 'What is land consolidation?' [www.fao.org/docrep/006/Y4954E/y495e06.htm](http://www.fao.org/docrep/006/Y4954E/y495e06.htm)
- Գաբրիելյան, Գագիկ (2004), «Վերլուծական ակնարկներ Հայաստանի աղքատամետ հայեցակարգերի մասին: Հողային բարեփոխումներ, գյուղական աղքատություն և անհավասարություն»: Երևան, 2004 թ.-ի հոկտեմբեր
- Glinkina, Svetlana and Dorothy Rosenberg (2003), 'Social and Economic Decline as Factors in Conflict in the Caucasus'. WIDER Discussion Paper 2003/18. Helsinki.
- ՀՀ Կառավարություն (2003), *Հակակոռուպցիոն ռազմավարություն և գործողությունների ծրագիր*: Երևան
- ՀՀ Կառավարություն (2004), Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն: Yerevan.
- Griffin et al (2002), *Growth, Inequality and Poverty in Armenia*. UNDP: Yerevan. Mimeo.
- ICRA (2004), *Cooperating to Reconstruct Rurality: A study of institutional support needs for agricultural livelihoods in Sisian and Goris regions of Syunik marz, Armenia*, Wageningen
- IMF (2003), Republic of Armenia: Fourth Review under the Poverty Reduction and Growth Facility and Request for Waiver of Performance Criterion.
- IMF (2003), *Republic of Armenia: Poverty Reduction Strategy Paper*. IMF Country Report No. 03/362.
- ՀՀ Տնտեսական բարեփոխումների տեղեկատվական-վերլուծական կենտրոն և ՄԱԿ-ի գրասենյակ (2002) 'Armenia Social Trends'. Nrs . 3-5 Yerevan.
- Lerman, Zvi and Astghik Mirzakhanyan (2001), *Private Agriculture in Armenia* (Lanham and Oxford: Lexington Books).
- Lerman, Zvi and Dirk J. Bezemer (2002), 'Rural Livelihoods in Armenia'. Mimeo.
- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն (2004): Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն: Երևան
- ՀՀ ԱՎԾ (2001), *Հայաստանի գյուղատնտեսությունը 1991-1999 թթ.* Երևան, ՀՀ Ազգային վիճակագրության ծառայություն
- ՀՀ ԱՎԾ (2002a), *Գյուղատնտեսության տվյալներ 2001-2003 թթ.* Երևան
- ՀՀ ԱՎԾ (2002b), *Տվյալներ գյուղատնտեսության ոլորտի և գների ու սակագների վերաբերյալ* [www.armstat.am](http://www.armstat.am)
- ՀՀ ԱՎԾ (2003a), *Տվյալներ գյուղատնտեսության ոլորտի և գների ու սակագների վերաբերյալ* [www.armstat.am](http://www.armstat.am)
- ՀՀ ԱՎԾ (2003b), *ՀՀ մարզերը թվերով, 1998-2002*. Երևան
- ՀՀ ԱՎԾ (2003c), *Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը* [www.armstat.am](http://www.armstat.am)
- ՀՀ ԱՎԾ (2004a), *2001 մարդահամար*, Երևան
- ՀՀ ԱՎԾ (2004b), *Ժողովրդագրական տվյալներ 1998-2002*. Երևան
- ՀՀ ԱՎԾ (2004c), *2001 թ.-ի մարդահամարի արդյունքները* [www.armstat.am](http://www.armstat.am)
- ՀՀ ԱՎԾ (2004d), *Վիճակագրական տվյալներ 2003 թ.*, Երևան
- Riddell, J. and Rembold, F.(2000), 'Farm Land Rationalisation and Land Consolidation: Strategies for Improved Land Management in Eastern and Central Europe'. Mimeo. [www.fig.net/pub/proceedings/prague-final-papers/riddell-rembold.htm](http://www.fig.net/pub/proceedings/prague-final-papers/riddell-rembold.htm)
- ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (2003), Գյուղատնտեսական հողերի շուկան 2003 թ-ին: Երևան
- ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (2003), Անշարժ գույքի շուկան 1998-2003 թթ.: Երևան
- ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե (2004), Գյուղատնտեսական հողերի շուկան 2004 թ-ի առաջին կիսամյակում: Երևան
- ՌՕՁՕԷԻ ՌԻ Ա (2002) *Առաջի ամբողջ ՌԻ Ա 2001, 1 րեհա*
- ՄԱԶԾ և ՀՀ Կառավարություն (2002-2004), Հայաստանի սոցիալական միտումները, Տեղեկատվական-վերլուծական հրատարակում, հհ. 3-6, Yerevan. [www.undp.am/?page=publications](http://www.undp.am/?page=publications)
- World Bank (2002), *Armenia Poverty Update*. Report No. 24339-AM. Washington: The World Bank. [www.landcoalition.org/pdf/wbfarm.pdf](http://www.landcoalition.org/pdf/wbfarm.pdf) 'Contextual Information for Armenia' (հողի գրանցման ծրագրի վերաբերյալ):